



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Մարդը և բնությունը Հայաստանում.

Բնապահպանական իրազեկության
վերաբերյալ ԳՎՓ\KAP հետազոտություն

Հաշվետվետվություն
RACT Assist GmbH
Փետրվար, 2020թ

Բովանդակություն

Հապավումներ

Գծապատկերների և գրաֆիկների աղյուսակ

Հայաստանի քարտեզ

Ամփոփագիր.....	6
1 Ներածություն	Error! Bookmark not defined.
2 Մարդը և բնությունը	11
3 Կենսաբազմազանություն.....	Error! Bookmark not defined.9
4 Կլիմայի փոփոխություն	24
5 Էներգիա	26
6 Վառելիքայտ	Error! Bookmark not defined.7
7 Արոտների կառավարում	257
8 Գյուղարտադրանք	31
9 Տեղեկատվության աղբյուրներ.....	31
10 Նախնական եզրակացություններ	34

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԱՍ 1. Ընտրանքի կառուցվածք

ՄԱՍ 2. Պատահական մեթոդով այցելության ընթացակարգ

ՄԱՍ 3. Տեխնիկական և մեթոդաբանական մոտեցում

ՄԱՍ 4. Հարցեր

ՀԱՎԵԼՎԱԾ 2 Հարցաշարը հայերենով և անգլերենով


Հապավումներ

BMZ	Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն
CAPI	Անհատական հարցազրույց համակարգչի օգնությամբ
GIZ/ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցություն
GORBI	Georgian Opinion Research Business International
KAP	Գիտելիք, վերաբերմունք և պրակտիկա
PAPI	Անհատական հարցազրույց թուղթ ու գրչի օգնությամբ
ՍԸՄ	Սկզբնական ընտրանքի միավոր
Համ.	համապատասխանաբար
ԵրկԸՄ	Երկրորդային ընտրանքի միավոր
ԵրրԸՄ	Երրորդային ընտրանքի միավոր

Գծապատկերների և գրաֆիկների աղյուսակ

Գծապատկեր 1. Բնական պաշարների վիճակի՝ 5-10 տարվա փոփոխությունների դիտարկում	11
Գծապատկեր 2. Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը կատարվող մի քանի գործողություն (2016 – 2019 թթ. համեմատություն).....	14
Գծապատկեր 3. Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը կատարվող մի քանի գործողություն (2016 – 2019 թթ. համեմատություն).....	14
Գծապատկեր 4. Բնության պաշտպանության ուղղությամբ «առաջին 5 առաջնահերթությունների» ընտրություն.....	17
Գծապատկեր 5. Առանձին էկոհամակարգերում կենսաբազմազանության կորստի վերաբերյալ մտահոգություն	18
Գծապատկեր 6. Բնության օգուտների և էկոհամակարգային ծառայությունների կարևորությունը.....	19
Գծապատկեր 7. Բնության օգուտների և էկոհամակարգային ծառայությունների կարևորությունը.....	Error! Bookmark not defined.
Գծապատկեր 8: Կենսապահովմանը սպառնացող ռիսկեր (1)	20
Գծապատկեր 9. Կենսապահովմանը սպառնացող ռիսկեր (2).....	21
Գծապատկեր 10. Էներգիայի աղբյուրների օգտագործումը տնային տնտեսություններում	24
Գծապատկեր 11. Օգուտներն արոտավայրերից	26
Գծապատկեր 12. Արոտները կարգավորող օրենսդրությանը վերաբերող պնդումներ	27
Գծապատկեր 13. Մասնակցությունը հողերի կայուն կառավարման աշխատանքներին ...	27
Գծապատկեր 14. Արոտների կառավարման գործառույթները.....	28
Գծապատկեր 15. Կոնֆլիկտներ անասնազուխ ունեցողների և այլ շահակիցների միջև ...	29
Գծապատկեր 16. Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության խողովակներն ավելի քան 10%-ի պարագայում (2016-2019 թթ. համեմատություն)	33
Գծապատկեր 17. Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության վստահելի աղբյուրները՝ ավելի քան 10%-ի պարագայում (2016 – 2019 թթ. համեմատություն).....	33

Հայաստանի վարչական քարտեզ՝ սկզբնական ընտրանքային միավորների ԱՏՀ կոորդինատների նշմամբ



Ամփոփագիր

ECOserve ծրագիրը

Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում իրականացված KAP հետազոտությունները պատվիրվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության (GIZ) կողմից՝ «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» ECOserve ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է բարելավել բնական պաշարների կայուն օգտագործումը և նպաստել կենսաբազմազանության պահպանմանն ու կլիմայի պաշտպանությանը՝ հատկապես ի նպաստ գյուղական շրջանների բնակչության: Ավելին, ծրագիրը ձգտում է ավելացնել վերականգնվող էներգատեսակների տեսակարար կշիռը էներգետիկ համակցությունում և բարձրացնել էներգաարդյունավետությունը: Հետազոտության նպատակն է գնահատել հանրության իմացությունն ու վերաբերմունքը բնական պաշարների կարևորությանն ու էկոհամակարգային ծառայություններին վերաբերող միջամտությունների ուղղություններում, ինչպես նաև հանրության իմացությունն ու վերաբերմունքը կենսաբազմազանության և կլիմայական թեմաների առնչությամբ: 2019 թ. KAP հետազոտությունները ցույց են տալիս գիտելիքի, վերաբերմունքի և պրակտիկաների փոփոխությունը՝ 2016 թ. ԳՄՀԸ-ի պատվիրած KAP բնապահպանական հետազոտության համեմատ, և նպաստում են էկոսերվ ծրագրի առջև դրված խնդիրների հետագա մոնիտորինգին:

Հայաստանում շրջակա միջավայրի իրավիճակի հանրային ընկալումը

Հայաստանաբնակների կապն իրենց բնական միջավայրի հետ բազմաշերտ է: Բնակչության մի զգալի հատվածի համար «մարդ-բնություն» հարաբերությունների կրոնական, խորհրդային շրջանի և մերօրյա ընկալումները շարունակում են համագոյակցել, նույնիսկ եթե դրանք ինչ-որ չափով հակասական են: Մի կողմից՝ բոլորն ընդունում են բնության աստվածային էությունը, որին պետք է հարգանքով վերաբերել: Բոլոր հարցվածների 97.8%-ը համակարծիք է, որ անհրաժեշտ է բնությունը պահպանել հետագա սերունդների համար, սակայն ընդհանուր առմամբ համակարծիք չէ կենդանիների և բույսերի տեսակների վերացման հարցում: Մյուս կողմից և, դրան զուգահեռ, բնությունը որպես «վայրի բնություն» ընկալելը և հետևաբար «մարդկությանը ծառայելու համար այն խնամելու» կարծիքը դեռևս գերակշռում է:

Ընդհանուր առմամբ, մարզային քաղաքներում ապրողներն ավելի քիչ են իրազեկ բնապահպանությունից, քան Երևանի բնակչությունը և նաև՝ գյուղերի բնակչությունը: Օրինակ, եթե միջինում 15%-ը գտնում է, որ արդարացված է կենդանատեսակներն ի բարօրություն մարդու վերացնելը, ապա այդ կարծիքի բացվածքն այսպիսին է՝ 12.2% Երևանում, 13% գյուղերում և 19% մարզային քաղաքներում:

Սեռերի միջև շատ քիչ տարբերություններ են հայտնաբերվել: Գրեթե բոլոր հարցերի պարագայում պատասխանների տարբերությունը տատանվել է առավելագույնը 1-3%-ի սահմաններում: Ավելի մեծ տարբերություններ հայտնաբերվել են էկոլոգիապես անվնաս վարքագծին վերաբերող պատասխաններում. էներգախնայող լամպեր ավելի շատ

օգտագործում են տղամարդիկ, իսկ ավելի ցածր ջերմաստիճանի տակ լվացք են անում կանայք: Հարցված կանայք ավելի կարևորել են կրթության որակը, մինչդեռ տղամարդիկ ավելի կարևորել են կոռուպցիայի դեմ պայքարը: Կանայք նաև ավելի են կարևորել առողջ շրջակա միջավայրը, քան տղամարդիկ, ովքեր որպես առաջնահերթություն նախապատվություն են տվել տնտեսական առաջընթացին:

Ներգրավելու պատրաստակամությունը և շրջակա միջավայրի պաշտպանության առաջնահերթությունները

Հարցվածքների շրջակա միջավայրի պաշտպանությանը մասնակցելու պատրաստակամությունն այժմ մի փոքր է բարձր եղել 2016 թ. -ի համեմատ, օրինակ, ջուրն ու էներգիան խնայելու կամ օրգանական աղբաման օգտագործելու հարցերում: Ուշադրության է արժանի էներգախնայող լամպերի օգտագործման ծավալների ավելացումը: Հետաքրքրական է, որ Երևանում բնակչության ավելի քան կեսը երբեք չի առանձնացրել թափոնները կամ գտնում է, որ թափոնների առանձնացումը իրեն չի վերաբերում: Ի հակադրություն այդ ամենի՝ գյուղերում և մարզերում ավելի քան 70%-ն առանձնացնում է օրգանական թափոնները, մինչդեռ Երևանում 50%-ից պակասն է այդպես վարվում: Սա վկայում է, որ մարդիկ պատրաստ են առանձնացնել թափոնները, եթե դա լինի հնարավոր (կա համապատասխան ենթակառուցվածք) և օգտակար:

«Ի՞նչ կարելի է անել Հայաստանում բնությունը պաշտպանելու համար» հարցին պատասխանելիս հարցվածները կարևորել են թափոնների հավաքումն ու տեղադրումը, որի համար համապատասխան ենթակառուցվածք պետք է ստեղծի կառավարությունը: Երկրորդ առաջնահերթությունը մեկանգամյա օգտագործման պլաստիկի արգելումն է, որին հաջորդում է բնական պաշարների շահագործման (օր.՝ հանքարդյունաբերություն, հիդրոէներգիայի արտադրություն, անտառահատում) բացասական ազդեցությունների շրջանցումը, որի համար անհրաժեշտ է ամրապնդել ու կիրարկել պետական կարգավորումներ: Ողջամիտ բնապահպանական քաղաքականություններն առաջնահերթություն է բնակչության ավելի քան 40%-ի համար: Հարցվածների ավելի քան մեկ երրորդը բնապահպանական օրենքների կիրարկումն ու շրջակա միջավայրն աղտոտողների նկատմամբ ծանր տուգանքների նշանակումը տեսնում է որպես առաջնահերթություն: Քաղաքային տարածքների կանաչապատումը որպես առաջնահերթություն է դիտում քաղաքաբնակների մեծամասնությունը: Ուշագրավ է, որ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմումը և դրանց հարմարվելը չի համարվում առաջնահերթություն: Նաև կարևոր առաջնահերթություններ չեն համարվել հանուն շրջակա միջավայրի իրազեկության բարձրացումը, բնության վերականգնողական արժեքի վերաբերյալ տեղեկատվական արշավը և էկոտուրիզմի խթանումը (բոլոր միասին՝ մոտ 20%):

Կենսաբազմազանություն

Ընդհանուր առմամբ, հայաստանաբնակներին անհանգստացնում է իրենց առանձին էկոհամակարգերի կենսաբազմազանության կորուստը: Անհանգստության աղբյուր է հատկապես անտառների, գետերի և լճերի կորուստը: Հարցվածների ավելի քան 90%-ը «խիստ մտահոգված և շատ մտահոգված» է այդ էկոհամակարգերում կենսաբազմազանության կորստով: Լեռների, խոտհարքների և մշակահողերի պարագայում մտահոգությունն ավելի քիչ է, սակայն դեռևս բարձր է՝ մոտ 80-85%: Գյուղական և քաղաքային շրջանների միջև տարբերությունը զգալի է՝ մշակաբույսերի և արոտավայրերի առնչությամբ: Նմանատիպ

իրավիճակ է տիրում խոտհարքների առնչությամբ: Բոլոր կատեգորիաներում մտահոգությունը մի փոքր ավելի մեծ է 61+ տարիքային խմբում՝ 18-30 տարիքային խմբի համեմատ: Ինչ վերաբերում է բնության հետ շփմանը, հարցվածների գրեթե կեսը երբեք չի գնում այնպիսի վայրեր, որտեղ հնարավոր է վայրի կենդանիներին տեսնել իրենց բնական միջավայրում: Սա, անշուշտ, Երևանի (50%) և գյուղերի (37%) տարբերությունն է:

Կլիմայի փոփոխություն

Հայաստանում կլիմայի փոփոխության իմացությունը թվում է հատվածական և ինչ-որ չափով՝ խճճված: Օրինակ, հարցվածների գրեթե 90%-ը գտնում է, որ կլիմայի փոփոխությունը վերաբերում է «եղանակի փոփոխությանը»: Ընդհանուր առմամբ, հարցվածները հակված են կարծելու, թե հարցաշարում բոլոր պնդումները վերաբերում են կլիմայի փոփոխությանը, նույնիսկ եթե իրենք սխալ էին կամ նկարագրել էին իրար չկապված երևույթներ: Օրինակ, մարզային քաղաքներում բնակչության գրեթե կեսը համակարծիք է եղել, որ կլիմայի փոփոխությունը չի ազդում Հայաստանի վրա, քանի որ վերջինս ծովային սահմաններ չունեցող երկիր է: Կլիմայի փոփոխության իմացությունը դեռևս լավ խարսխված չէ Հայաստանի հանրության կարծիքում:

Էներգիանայողություն

Հայաստանի տնային տնտեսությունների մեծամասնությունը օգտվում է էներգիայի մի քանի աղբյուրից: Տնային տնտեսությունների կողմից օգտագործվող էներգիայի աղբյուրներն են հիմնականում գազը՝ քաղաքներում (Երևանում հարցվածների 93%-ը և այլ քաղաքներում/մարզերում հարցվածների 86%-ը) և դեռևս 78.9% է գյուղերում: Վառելիքայտից օգտվում է Երևանում հարցվածների ընդամենը 9%-ը, մարզերում հարցվածների 24%-ը և գյուղերում հարցվածների 75%-ը: Հարկ է նկատել, որ հեռավոր գյուղերի տնային տնտեսությունները գազն օգտագործում են հիմնականում կերակուր պատրաստելու համար, իսկ մյուս աղբյուրները, օրինակ՝ վառելիքայտը, ջեռուցման համար: Մարդիկ ներդրում կկատարեն նոր էներգետիկ աղբյուրներում, եթե դրանք վառելիքայտից էժան լինեին կամ եթե օգտագործումը հարմար լիներ: Ներդրում կատարելու որոշման մեջ դեր ունի նաև առողջական մասը: Արևային էներգիան թերևս նախընտրելի լուծում է, նկատվում է աճող հետաքրքրություն արևային էներգիայի նկատմամբ (տարբերակված չէ ջերմային կամ ֆոտովոլտայինի): Որպես համեմատություն նշենք, որ վառելիք խնայող կաթսաներում ներդրումները շատ գրավիչ չեն: Հարցվողները նաև շատ գրավիչ չեն համարել տան ջերմամեկուսացման նպատակով ներդրում կատարելը:

Գյուղատնտեսություն

Հայաստանաբնակները նախապատվություն են տալիս հայկական արտադրատեսակներին, որոնք իրենց կարծիքով ավելի լավն են ու ավելի բնական, քան մյուս արտադրատեսակները: Այս համոզմունքը միշտ չէ, որ բխում է իրենց սեփական արտադրական փորձառությունից: Գրեթե բոլոր հարցվածները չեն օգտվում մարգագետիններից ու արոտներից՝ խոտաբույսեր հավաքելու համար, և միայն մեկ երրորդն է դրանցից օգտվում սեփական սպառման նպատակով: Ընդհանուր առմամբ, 90%-ը գտնում է, որ հայկական արտադրանքը, այդ թվում՝ մրգերը, բանջարեղենը, միսը, պանիրը, կաթը, մածուկը, կանաչիները ավելի առողջարար են ու ավելի քիչ քիմիկատներ են պարունակում, քան ներկրված ապրանքները: Այս առումով քաղաքային և գյուղական շրջանների կամ տղամարդկանց և կանանց միջև տարբերություն չկա:

Եզրակացություն

Այս հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում բնապահպանական խնդիրների մասին իրազեկությունը բավականին մեծ է, նաև պատրաստակամություն կա էկոլոգիապես անվտանգ գործելու, եթե լինեն համապատասխան հնարավորություններ: Այստեղ անհրաժեշտ է տեսական և գործնական գիտելիքի մասերը կապել ու ձևավորել տարբեր թեմաների շուրջ կապակցված հանրային կարծիք (օր.՝ կլիմայի փոփոխության վտանգները, քիմիկատների/թունաքիմիկատների խնդրահարույց օգտագործումը գյուղատնտեսությունում, էներգախնայող և էներգաարդյունավետ շինանյութերի օգտագործման խթանումը): Իդեալական տարբերակում այս ամենը պետք է ուղեկցվի շարունակական պետական աջակցությամբ, որը դրսևորվելու է կոռուպցիայից զերծ բնապահպանական իրավակարգավորման շրջանակի ապահովմամբ և դրա կիրարկմամբ, ինչպես նաև հանուն էկոլոգիապես անվտանգ գործելակերպերի սեփականության և շահադրդվածության ձևավորմամբ (օր.՝ խթաններ, աջակցություն բնապահպանական կարծիք ձևավորող նախաձեռնողական լիդերներին): Ըստ ամենայնի, հարցվողներին հետաքրքրող բնագավառներն են արևային էներգիան (ջերմային և ֆոտովոլտային) և բնական պաշարների, օրինակ՝ արոտների ու անտառային պաշարների կայուն կառավարումը՝ համակցված էկոհամակարգային ծառայություններով: Գետերն ու լճերն այն էկոհամակարգերն են, որ հայաստանաբնակների ընկալմամբ ամենավտանգվածներն են, ինչը կարող է սկզբնակետ լինել կենսաբազմազանության շուրջ հետաքրքիր խոսակցության համար, որը հիմնվում է մարդկանց մասնակցության վրա:

Ներածություն

ԿԱՐ հետազոտության մեթոդաբանությունը

2019 թ. ԿԱՐ հետազոտությունները ղեկավարել է «ԷյՍիԹի Ըսիսթ» (ACT Assist GmbH) գերմանական կազմակերպությունը, իսկ երեք երկրներում դաշտային աշխատանքը կազմակերպել է վրացական Գորբի (GORBI) ընկերությունը: Հայաստանում դաշտային աշխատանքների ընտրանքը բաղկացած է եղել 1,400 հարցազրույցներից, որոնք անց են կացվել 2019 թ. սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 28-ը: Որակի լրացուցիչ վերահսկողության շնորհիվ 54 հարցաշարեր չեն ընդունվել և նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 10-ը կատարվել է լրացուցիչ տվյալների հավաքագրում:

Հայաստանում համազգային հետազոտությունը կատարվել է համակարգչի օգնությամբ անցկացվող անհատական հարցազրույցների (CAPI) միջոցով՝ պլանշետների օգնությամբ: Հարցազրույցների տվյալներն ու GPS կոորդինատներն ամենօրյա կտրվածքով փոխանցվել են Գորբի կազմակերպության սերվեր: Սկզբնական ընտրանքի միավորները (ՄԸՄ) ընտրատարածքներն են եղել, քանի որ դրանք ամբողջ երկրում համեմատաբար նույն մեծության են, և երկիրը բաժանվել է քաղաքային ու գյուղական շերտերի: Երկրորդային ընտրանքի միավորները (ԵրկԸՄ) եղել են տնային տնտեսությունները, որոնք ընտրվել են երթուղու պատահական ընտրության մեթոդով, որը մոտ է պարզ պատահական ընտրանքին (ՊՊԸ): Երրորդային ընտրանքի միավորները (ԵրրԸՄ) եղել են ֆիզիկական անձինք: Ընտրության այս փուլում ցանկալի շերտադասումը եղել է «տղամարդ-կին» և «երիտասարդ-տարեց»: ԳՄՀԸ պահանջով՝ վստահության ցանկալի մակարդակ է սահմանվել 80%-ը:

Հարցաշարը, ներառյալ 71 հարց (այդ թվում՝ ժողովրդագրական հարցեր) և մինչև 18 փոփոխական՝ յուրաքանչյուր հարցի համար, մշակվել են «ԷյՍիԹի Ըսիսթ» և «Գորբի» կազմակերպությունների կողմից: Հարցաշարը թարգմանվել է անգլերենից հայերեն, ինչպես նաև թեստավորվել ու հաստատվել է «Գորբի» կազմակերպության կողմից: Նախքան դաշտային աշխատանքները սկսելը՝ «Գորբի» կազմակերպությունը կազմակերպել է փորձնական հարցազրույցներ՝ հարցաշարի հետ կապված հնարավոր խնդիրները, օրինակ՝ անհասկանալի տերմիններ, չափազանց շատ հարցեր և/կամ փոփոխականներ և այլն, հասկանալու համար: Վերապատրաստման ընթացքում և դրանից հետո անցկացված փորձնական հարցազրույցների ժամանակ հարցազրուցավարները ծանոթացել են հարցաշարին և ընտրանքի առանձնահատկություններին: Փորձնական հարցազրույցի արդյունքներով՝ հարցաշարը վերանայվել ու վերջնական վիճակի է բերվել (մանրամասները տե՛ս հավելվածում):

1400 հարցվողների առկայության պայմաններում՝ կշռված ընտրանքը երկրի համար ներկայացուցչական է և վիճակագրորեն նշանակալի: Երևանում անց են կացվել 452 հարցազրույցներ, այլ քաղաքներում և մարզերում՝ 465, իսկ գյուղերում՝ 482: Ընդհանուր ընտրանքի կազմում ընդգրկված են եղել 646 տղամարդ և 754 կին, իսկ տարիքային խմբերում բաշխվածության պատկերը եղել է այսպիսին՝

18-30	31-45	46-60	61+
372	429	316	284

Հետազոտության բացահայտումների՝ ստորև բերված թեմատիկ բաժիններում ներկայացված վերլուծությունում հիմնականում ներկայացված են խոշորացված արդյունքները, իսկ ժողովրդագրական համեմատականների (տղամարդ/կին, երիտասարդ/տարեց և քաղաք/գյուղ) տվյալները նշվել են միայն անումալիաների կամ միջին արժեքի համեմատ շեղումների դեպքում կամ եթե տվյալներն այնքան զարմանալի են թվացել, որ արժեր դրանք ընդգծել: Քանի որ տղամարդկանց/կանանց մեծամասնությունը և երիտասարդների/տարեցների համեմատականներում՝ միջին արժեքից զգալի տարբերություններ չկան, հետևաբար միջինից շեղումների պարագայում հղում է կատարվում քաղաք/գյուղ համեմատականին:

Մարդը և բնությունը

Համոզմունքների զուգահեռ համակարգերի առկայությունը

Հայաստանաբնակների կապն իրենց բնական միջավայրի հետ բազմաշերտ է, և այդ կապը բնորոշվում է սույն հետազոտության պնդումների հետ համամիտ լինելու կամ չլինելու աստիճանով: Բնակչության մի զգալի հատվածի համար «մարդ-բնություն» հարաբերությունների կրոնական, խորհրդային շրջանի և մերօրյա ընկալումները շարունակում են համագոյակցել, նույնիսկ եթե դրանք ինչ-որ չափով հակասական են:

Մի կողմից բոլորն ընդունում են բնության աստվածային էությունը, որին պետք է հարգանքով վերաբերել: Բոլոր հարցվածների 97.8%-ը համակարծիք է «բնության աստվածային» էության (HN 2.7) հետ և որ անհրաժեշտ է բնությունը պահպանել հետագա սերունդների համար (HN 2.3), սակայն ընդհանուր առմամբ համակարծիք չէ (84%) կենդանիների և բույսերի տեսակների վերացման (HN2.9) հարցում: «Աստծո ստեղծածը հարգելու» համակարգային համոզմունքը սովորաբար ակտիվացվում է Հայաստանում, եթե պնդումները ունենում են կրոնական հարանշանակություն:

Մյուս կողմից և, դրան զուգահեռ, բնությունը որպես «վայրի բնություն» ընկալելը և հետևաբար «մարդկությանը ծառայելու համար այն խնամելու» (HN 2.8) կարծիքը դեռևս զերակշռում է 61+ տարիքային խմբի շրջանում (44%), մինչդեռ 18-ից 30 տարեկանների տարիքային խմբում այս պնդմանը համակարծիք է ընդամենը 21%-ը: 41 % տարբերություն կա նաև գյուղերի/քաղաքների և մարզերի (համ.՝ 35%) և Երևանի միջև, որտեղ միայն 24 %-ն է համակարծիք «մարդ-բնություն» կապի՝ խորհրդային շրջանի դասական միատարր ընկալման հետ:

Ընդհանուր առմամբ, մարզային քաղաքներում ապրողներն ավելի քիչ են իրազեկ բնապահպանությունից, քան Երևանի բնակչությունը և նաև՝ գյուղերի բնակչությունը: Օրինակ, եթե միջինում 15%-ը գտնում է, որ արդարացված է կենդանատեսակներն ի բարօրություն մարդու վերացնելը (HN 2.9.), ապա այդ կարծիքի բացվածքն այսպիսին է՝ 12.2% Երևանում, 13% գյուղերում և 19% մարզային քաղաքներում:


Այս օրինաչափությունը, թերևս, հաստատվում է ողջ հարցաշարով: Օրինակ՝ ընդհանուր առմամբ, հարցվողների անառարկելի 37%-ը համամիտ է, որ «շրջակա միջավայրին վնաս

հասցնելն արդարացված է, եթե դա տնտեսական օգուտ է բերում» (HN 2.1): Մարզերի քաղաքներում այս կարծիքին է հարցվածների 47%-ը, իսկ Երևանում՝ ընդամենը 24%-ը: Ըստ հետազոտության արդյունքների՝ 51 %-ը կարծում է, որ ապագայի տեխնոլոգիաներն են շտկելու այսօր բնությանը հասցվող վնասը (HN 2.6), և ընդամենը 38%-ը համակարծիք չէ սրան: Այսպիսով, հետազոտության արդյունքները միտված են հաստատելու «եկեք արագ հարստանանք, իսկ բնությունը կպաշտպանենք ավելի ուշ» մոտեցումը (օր.՝ երբ տեխնոլոգիական առաջընթացն ի վիճակի կլինի լուծելու խնդիրները), որը տարածված է հասկապես մարզային քաղաքների բնակչության մի փոքր մեծամասնության շրջանում:

Բայցևայնպես, տեխնոլոգիական լավատեսության բարձր աստիճանին հակադրվում է այն բացահայտումը, որ 96 %-ը գտնում է, որ բնությունը փխրուն է և անհրաժեշտ է պաշտպանել այն (այսօր): Մեռերի միջև այս հարցում զգալի տարբերություն չկա: Այս ակներև հակադրությունը կարելի է բացատրել կոգնիտիվ դիստնանսով, որն առկա է այսօրվա իրավիճակի հոռետեսական գնահատականի (փխրուն բնությունը պաշտպանելու անհրաժեշտության) և ապագայի նկատմամբ ընդհանուր առմամբ լավատեսական հույսով (տեխնիկական առաջընթացը կլուծի խնդիրները), որը թույլ է տալիս ապագայի նկատմամբ պատասխանատվությունը՝ անորոշ ԱՅԼ-ը դարձնել արտաքին գործոն: Այս իմաստով Հայաստանը բացառություն չէ. նմանատիպ ընկալումը մեծ տարածում ունի Արևմտյան/Եվրոպական երկրներում և անգամ՝ ողջ աշխարհում:

Շրջակա միջավայրի վիճակի վատթարացում

Տարբեր բնական պաշարների (օդ, ջուր, հող, գետեր, լճեր, արոտներ և լեռներ) որակի (H&N3) մասով վերջին 5-10 տարիների ընթացքում գրանցված փոփոխությունների տարբերակված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր բնագավառներում բնակչության գերակշռող մեծամասնությունը (80%+) տեսնում է վատթարացում կամ չի տեսնում ոչ մի փոփոխություն դեպի լավը:



Գծապատկեր 1. Բնական պաշարների վիճակի՝ 5-10 տարվա փոփոխությունների դիտարկում

Ինչ վերաբերում է օդի որակին (HN 3.1)՝ միայն 18 %-ն է պատասխանել, որ օդի որակը մի փոքր կամ զգալիորեն բարելավվել է. ընդամենը 4%-ն է, որ կարծիք չի ունեցել: Օդի որակի վատթարացման ընկալումը կիսում է բնակչության 51%-ը, իսկ կայուն վիճակի ընկալումը 27%-ը: Տարիքային խմբերի, բնակավայրերի և սեռերի միջև մեծ տարբերություններ չկան:

Ջրի որակի (HN 3.2) առնչությամբ ընկալումն ավելի դրական է, ջրամատակարարման համակարգերի բարելավման ընկալում կա 27%-ի մոտ, անփոփոխ վիճակ է ախտորոշել 32%-ը: 39%-ը գտնում է, որ կա իրավիճակի վատացում: Այս ընկալումը կախված չէ բնակավայրի իրավիճակից, գյուղական շրջաններում և քաղաքներում, ինչպես նաև Երևանում նկատվել են նմանատիպ արդյունքներ:

Հողի որակի (HN 3.3) առնչությամբ նշենք, որ հարցվողների միայն 15 %-ն է բարելավում տեսնում: Հողի որակի մասին իմացության պակասն ամենամեծն է Երևանում՝ 30%, մինչդեռ գյուղերում ընդամենը 7% է: Ի տարբերություն բնապահպանական այլ խնդիրների՝ հողի կորուստը կամ դեգրադացիան դեռևս խարսխված չէ հանրային կարծիքում, եթե այդ մարդիկ գյուղական շրջաններում պրակտիկ փորձ չունեն: Ի տարբերություն գյուղատնտեսությունը զարգացնելու հարցի կարևորության՝ այստեղ առկա է տեղեկացվածության պակաս:

Գետերի և վճերի վիճակը (HN 3.4 և HN 3.5) շատ զգայուն հարց է Հայաստանի հանրության կարծիքով: Հարցվածների ընդամենը 10%-ն է համարում, որ այստեղ բարելավում կա, մինչդեռ 58%-ն ընկալում է վատթարացում: Ընդհանուր խնդիրը մի փոքր ավելի քննադատաբար է դիտվում Երևանում (60%), քան գյուղերում (59%) և փոքր քաղաքներում/մարզերում (56%): Հիդրոէկոլոգիայի մասնագետների դեմ շարժման ծավալման, գետերի և լճերի աղտոտումը թույլ չտալու նպատակով հանքերի դեմ ընդդիմության և խորհրդային շրջանից ժառանգություն մնացած՝ Սևանա լճի ջրի մակարդակի ահռելի անկման պայմաններում՝ այս բնապահպանական խնդիրը համեմատաբար նշանակալի է հանրության ընկալմամբ. այսինքն՝ գետերն ու լճերը հայաստանաբնակների մեծամասնությանը մտահոգության տեղիք են տալիս: Տարիքային խմբերի միջև կարևոր տարբերություններ չկան: Գյուղական շրջաններում ավելացող երաշտների ու ոռոգման ջրի պակասի հետևանքով ավելի մեծ է զգայունությունը գյուղական շրջաններում՝ ի տարբերություն Երևանի և մարզերի քաղաքների:

Ինչ վերաբերում է արոտային պաշարներին՝ իրավիճակը բնորոշվում է Երևանում (49%) և այլ քաղաքներում գիտելիքի պակասով: Վատացման ընկալում ունի Երևանում հարցվածների միայն 28%-ը: Խոշոր եղջերավոր կենդանիների և արոտների կառավարումը քաղաքային թեմաներ չեն Հայաստանում: Հեռավոր գյուղերում իրավիճակին այլ գնահատական են տալիս. միայն 13%-ն է, որ կարծիք չունի, իսկ հարցվածների գրեթե կեսը՝ 49%-ը գտնում է, որ կա իրավիճակի վատացում:

Բնական պաշարներին և լեռնային շրջաններին վերաբերող ընդհանուր իրավիճակը (HN 3.7) գնահատվել է որպես անփոփոխ (28%), համեմատաբար բարձր՝ 29% են կազմել «չգիտեմ» պատասխանները, որը թերևս պայմանավորված է թեմայի անորոշությամբ մի երկրում, որտեղ լեռներն ամենուր են: Լեռնային շրջաններում բնապահպանական իրավիճակի վատթարացման 30% ընկալում կա գյուղերում և 36%՝ Երևանում: Սեռերի միջև բացահայտված տարբերությունները բավականին փոքր են եղել: Գրեթե բոլոր հարցերի պատասխանների

տարբերությունները տատանվել են առավելագույնը 2-3%-ով: Ավելի մեծ տարբերություններ հայտնաբերվել են էկոլոգիապես անվնաս վարքագծին վերաբերող պատասխաններում. էներգախնայող լամպեր ավելի շատ օգտագործում են տղամարդիկ, իսկ ավելի ցածր ջերմաստիճանի տակ լվացք են անում կանայք: Հարցված կանայք ավելի կարևորել են կրթության որակը, մինչդեռ տղամարդիկ ավելի կարևորել են կոռուպցիայի դեմ պայքարը: Կանայք նաև ավելի են կարևորել առողջ շրջակա միջավայրը, քան տղամարդիկ (համ` 71% և 65%), ովքեր որպես առաջնահերթություն նախապատվություն են տվել տնտեսական առաջընթացին (տղամարդիկ` 28%, կանայք` 18%):


Շրջակա միջավայրին նպաստող գործողություններ

Բնական միջավայրի վիճակի վատացման` այս բավականին անհանգստացնող ընկալման ֆոնին հետաքրքիր է հասկանալ, թե հայաստանաբնակներն ինչ են մտածում բնական միջավայրի պաշտպանությանն ուղղված` քաղաքացիների և քաղաքականություն մշակողների կողմից ձեռնարկվող գործողությունների մասին: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ հայաստանաբնակներն ամբողջությամբ հիասթափված չեն: Ըստ հարցման արդյունքների` հարցվածների 82%-ը համամիտ չէ «մենք ոչինչ չենք կարող անել շրջակա միջավայրի վիճակը փոխելու համար» (HN2.4) պնդմանը. այս պատասխանի պատկերը 91% է 18-ից 30 տարիքային խմբում և 70%` 61+ տարիքային խմբում: Այսպիսով, մի զգալի մեծամասնություն բնապահպանական գործողությունների կողմնակից է:

Տանը կատարվող գործողությունները


Ինչ վերաբերում է անհատական գործողությունների շրջանակին (HN 4), հարցվածներին տրվել է 15 տարբերակ` սկսած աղբի առանձնացումից, էներգախնայողությունից մինչև ջրի խնայում և ավելի քիչ պարարտանյութերի օգտագործում` կոմպոստի հաշվին: Հարցվողներին խնդրել են նշել` արդյոք իրենք միշտ, հաճախ, հազվադեպ մասնակցել են նման աշխատանքների, թե՞ ընդհանրապես չեն մասնակցել: Ընդհանուր առմամբ, ջրի և էներգիայի խնայողության միջոցառումներն անցած տարվա ընթացքում ավելի ու ավելի լայն գործնական կիրառություն են ստացել: Միջոցառումների մեծ մասը դրական զարգացում է ունեցել` բացառությամբ կենցաղային թափոնների առանձնացման և էներգաարդյունավետ շինարարական նյութերի օգտագործման:

Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը իրականացվող գործողություններ (2016 – 2019 թթ. համեմատություն)



Գծապատկեր 2. Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը կատարվող մի քանի գործողություն (2016 – 2019 թթ. համեմատություն)

Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը իրականացվող գործողություններ (2016 – 2019 թթ. համեմատություն)



Գծապատկեր 3. Շրջակա միջավայրի պաշտպանության՝ տանը կատարվող մի քանի գործողություն (2016 – 2019 թթ. համեմատություն)

Հետաքրքրական է, որ Երևանում բնակչության 33%-ը երբեք չի առանձնացրել թափոնները, իսկ 24%-ը գտնում է, որ թափոնների առանձնացումը իրեն չի վերաբերում (HN4.1): Ի հակադրություն այդ ամենի՝ գյուղերում և մարզերում օրգանական թափոնները (միշտ և հաճախ) առանձնացնողների տոկոսային ցուցանիշը համեմատաբար բարձր է (77%՝ մարզերում և 67%՝ գյուղերում), մինչդեռ Երևանում այդ ցուցանիշն ընդամենը 41% է (HN4.2): Սա վկայում է, որ մարդիկ պատրաստ են առանձնացնել թափոնները, եթե դա հնարավոր է (կա համապատասխան ենթակառուցվածք, կա կենդանիներին կերակրելու հնարավորություն, սեփական պարտեզ և այլն) և օգտակար: Գյուղերում հարցվածների 59%-ը հաճախ կամ միշտ օրգանական թափոններն օգտագործում է կոմպոստացման համար: Քաղաքային միջավայրում սա, անշուշտ, ավելի դժվար է և ենթակառուցվածք է պահանջում (HN 4.3): Ավելի քիչ փաթեթավորում օգտագործելու առումով Երևանում մարդկանց մեծամասնությունը՝ 52%-ն է հաճախ կամ միշտ ավելի քիչ փաթեթավորում օգտագործում՝ ի տարբերություն գյուղերում գրանցված 37% ցուցանիշի: Ոչ պլաստիկ պայուսակները դեռևս տարածված չեն գյուղերում (20%)՝ ի տարբերություն Երևանի (39%): Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ գյուղերում, ըստ հաշվարկների, զգալիորեն ավելի քիչ է փաթեթավորում օգտագործվում, քան քաղաքային շրջաններում: Տերևներն այրելը՝ որպես պրակտիկա, նպաստում է օդի աղտոտմանը. գյուղերում այդ պրակտիկան կիրառում է մարդկանց մեծ մասը (56%), իսկ Երևանում մարդկանց 70%-ը ձեռնպահ է մնում այրելուց կամ համարում է դա ոչ կիրառական:

Ինչ վերաբերում է պարարտանյութերի օգտագործմանը (4.4%), հարցվածների մեծամասնությունն այդ հարցը վերաբերելի չի համարել կամ երբեք չի դիտարկել այն: Գյուղերում հարցվածների միայն 25%-ն է միշտ ավելի քիչ քիմիական պարարտանյութեր օգտագործում՝ շրջակա միջավայրը պաշտպանելու համար: Գյուղմթերքի արտադրությունում թունաքիմիկատների, միջատասպանների և հակաբիոտիկների գործածման կամ միրգ-բանջարեղենում կամ ջրի/գինու մեջ դրանց մնացորդային պարունակության մասին տեղեկացվածության հարցը, ցավոք սրտի, չի տրվել: «Բնական արտադրանքի», օր.՝ մեղր, կաթ, միս և գինի, մեջ թունաքիմիկատների և հակաբիոտիկների օգտագործման մասին տեղեկացվածության ու իրողության միջև, ըստ ամենայնի, ահռելի տարբերություններ կլինեն:

Ընդհանուր առմամբ, կենցաղային աղբն առանձնացնելու միջոցառումները 2016 և 2019 թվականներին նվազման միտում են ունեցել՝ չնայած օրգանական թափոնների համար նախատեսված աղբամանների օգտագործման ու կոմպոստացման, ինչպես նաև էներգախնայող լամպերի օգտագործման հարցում գրանցված զգալի փոփոխությանը: Կիրառության մեջ են էներգախնայող միջոցները, ինչպես օրինակ, լույսն անջատելը, երբ դրա անհրաժեշտությունը չկամ և էներգախնայող լամպերի օգտագործումը:

Լույսը, երբ պետք չէ, անջատող մարդկանց տոկոսը՝ ավելի քան 82%, կայուն է մնացել 2016-ից 2019 թվականներին: Էներգախնայող լամպեր օգտագործողների տեսակարար կշիռը 2016-ից 2019 թվականն ավելացել է՝ 49-ից հասնելով 61%-ի. սրանք այն մարդիկ են, ովքեր միշտ կամ հաճախ են օգտագործում էներգախնայող լամպեր: Հարցվածների 46%-ը երբեք այդպիսի լամպ չի օգտագործել կամ դրանք կիրառական չի համարում:

Կենսաբազմազանության պաշտպանությանն ուղղված՝ տանը կատարվող գործողությունների առումով՝ հարցվածների 33%-ը միշտ բույսեր է աճեցնում պատշգամբում կամ պարտեզում, ինչը գրավում է փոշոտողներին: 17%-ը պարտեզում տեղադրում է թռչունների բույն կամ վայրի թռչուններ է գրավում պարտեզ: Բայցևայնպես, բոլոր հարցվածների մեծամասնության (64%) պարագայում սա կա՛մ կիրառական չէ, կա՛մ երբեք գործնականում չի արվել:


«Ինչ կարելի է անել Հայաստանի բնությունը պաշտպանելու համար» (HN 5) հարցին պատասխանելիս հարցվածների համար թիվ մեկ առաջնահերթությունը եղել է թափոնների կառավարման ու տեղադրման բարելավումը (Երևանում՝ 80%, գյուղերում՝ 77%, այլ քաղաքներում՝ 83%), ինչի համար համապատասխան ենթակառուցվածքներ են անհրաժեշտ, որը պետությունը պետք է ստեղծի: Երկրորդ առաջնահերթությունը եղել է մեկանգամյա օգտագործման պլաստիկը (Երևանում՝ 64%, քաղաքներում՝ 59%, գյուղերում՝ 58%), որից հետո կարևորվել է բնական պաշարների շահագործման (օր.՝ հանքարդյունաբերություն, հիդրոէներգետիկա, անտառային ծածկույթի հատում) բացասական ազդեցություններից խուսափելը, որի համար հարկ է խստացնել ու կիրարկել պետական կարգավորումները: Ողջամիտ բնապահպանական քաղաքականություններն առաջնահերթություն են Երևանում՝ 42%-ի, իսկ գյուղերում՝ 41%-ի համար: Հարցվածների ավելի քան մեկ երրորդն առաջնահերթություն է համարում բնապահպանական օրենքների կիրարկումն ու բնությունն աղտոտողների նկատմամբ ծանր տուգանքների սահմանումը:

Քաղաքային տարածքների կանաչապատումը (HN 5.4.) որպես առաջնահերթություն է տեսնում հարցվածների 56%-ը՝ Երևանում և 64%-ը՝ այլ քաղաքներում/մարզերում: Հետաքրքիր է, որ կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացումը և դրանց հարմարվելը (HN 5.5.) առաջնահերթություն չի համարվել (Երևանում՝ 11%, գյուղերում՝ 13%): Կարևոր առաջնահերթություններ չեն համարվել նաև բնապահպանական օգուտների մասին իրազեկության մակարդակի բարձրացումը, բնության առողջարարական արժեքի մասին տեղեկացումն ու էկոտուրիզմի խթանումը (բոլորը միասին՝ մոտ 20%):

Թեև Հայաստանի բնակչությունը հստակ տեսնում է շրջակա միջավայրը պաշտպանելու անհրաժեշտությունը և հատկորոշում է կառավարության դերը բնապահպանական կարգավորումները մշակելու և կիրառության մեջ դնելու հարցում, սակայն դա չի դիտվում որպես այս պահի առաջնահերթություն պետության գործողության համար (HN 6): Կոռուպցիայի նվազեցումը թիվ մեկ առաջնահերթությունն է 59%-ի համար, որին հաջորդում է կրթության բարելավումը (57%), հանցավորության նվազեցումը (46%) և առողջապահության բարելավումը (34%): Շրջակա միջավայրի (գետեր, անտառներ, լճեր և այլն) պաշտպանության մասին նշել է ընդամենը 18%-ը՝ աշխատատեղերի ստեղծումից (33%), իսկ աշխատավարձերի բարձրացման հարցը (27%) միայն 7-րդ տեղում է: Երիտասարդների համար կոռուպցիայի նվազեցումն ու հանցավորության նվազեցումը մի փոքր պակաս կարևոր է, քան տարիքով մարդկանց համար, իսկ կրթությունն ու աշխատատեղերի ստեղծումը երիտասարդների համար ավելի բարձր տեղում է: Շրջակա միջավայրի պաշտպանությունը մի փոքր ավելի կարևոր է 18-30 տարիքային խմբում (24%)՝ ի տարբերությունը 61+ տարիքային խմբի (13%): Ինչ վերաբերում է սեռերի տարբերությանը՝ կանայք մի փոքր ավելի են շեշտադրում

կրթությունը (58%), որը նրանց համար թիվ մեկ առաջնահերթություն է, ի համեմատ տղամարդկանց 57%-ի: Կանանց համար մի փոքր ավելի բարձր տեղում է առողջապահությունը, քան տղամարդկանց համար (համապատասխանաբար՝ 37% և 31%): Երթևեկության ծավալների կրճատումը թիվ մեկ առաջնահերթություն է եղել միայն 2%-ի համար:

Բնության պահպանության ուղղությամբ «առաջին 5 առաջնահերթությունների» ընտրություն



Գծապատկեր 4. Բնության պաշտպանության ուղղությամբ «առաջին 5 առաջնահերթությունների» ընտրություն

Ցածր առաջնահերթությանը, սակայն, հակադրվում է հարցվածների 71%-ից ավելիի հաստատուն կարծիքը, որ բնությանը վնասող հանքարդյունաբերության կամ այլ ենթակառուցվածքների մեջ ներդրումների պարագայում առաջնահերթությունը պետք է տալ բնությանը՝ այլ ոչ տնտեսական առաջընթացին (HN7): Նաև՝ ավելի արժևորվել է առողջ շրջակա միջավայրը, քան էժան էներգիան. հարցվածների 80%-ը չի ցանկանում հանուն էժան էներգիայի ենթարկվել ատոմային աղետի վտանգի (HN 8):

Ընդհանուր առմամբ, կարելի է մեկնաբանել, որ հայաստանաբնակների շրջանում բնապահպանական խնդիրների իրազեկության մակարդակի բարձրացումը միայն մասամբ է


վերածվել կառավարությանն ուղղված հաստատուն պահանջի՝ ավելի ակտիվանալու և կարգավորումների ու դրանց խիստ կիրառման միջոցով սահմանելու շրջակա միջավայրի պաշտպանության ավելի արդյունավետ շրջանակներ, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքներ ու խթաններ, որոնք կնպաստեն, որ մարդիկ էկոլոգիապես ավելի անվտանգ գործեն: Մյուս կողմից, Հայաստանում ակտիվիստական լուրջ շարժումը վերջին տարիներին նպաստել է երկրում բնապահպանական խնդիրների մասին իրազեկության բարձրացմանը, որը վերածվել է հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկայի և ատոմային էներգետիկայի բնագավառում ներդրումների նկատմամբ թերահավատության և արևային էներգիայի ու էներգաարդյունավետության նկատմամբ ավելի մեծ աջակցության:

Կենսաբազմազանություն

Կենսաբազմազանության կորուստն էկոհամակարգերում

Ընդհանուր առմամբ, հայաստանաբնակներին անհանգստացնում է իրենց առանձին էկոհամակարգերի կենսաբազմազանության կորուստը: Անհանգստության աղբյուր է հատկապես անտառների, գետերի և լճերի կորուստը: Հարցվածների ավելի քան 90%-ը «խիստ մտահոգված և շատ մտահոգված» է այդ էկոհամակարգերում կենսաբազմազանության կորստով: Լեռների, խոտհարքների և մշակահողերի պարագայում մտահոգությունն ավելի քիչ է, սակայն դեռևս բարձր է՝ մոտ 80-85%: Գյուղական և քաղաքային շրջանների միջև տարբերությունը զգալի է՝ մշակաբույսերի և արոտավայրերի առնչությամբ: Երևանում խիստ մտահոգ հարցվածները կազմում են 44%, իսկ գյուղական շրջաններում 61%-ին մտահոգում է մշակահողերի կորուստը: Նմանատիպ իրավիճակ է տիրում խոտհարքների առնչությամբ: Բոլոր կատեգորիաներում մտահոգությունը մի փոքր ավելի մեծ է 61+ տարիքային խմբում՝ 18-30 տարիքային խմբի համեմատ:


Առանձին էկոհամակարգերում կենսաբազմազանության կորստի վերաբերյալ մտահոգությունը



Գծապատկեր 5. Առանձին էկոհամակարգերում կենսաբազմազանության կորստի վերաբերյալ մտահոգություն

«Շատ կարևոր» էկոհամակարգային ծառայություններ (B2) են որակվել, առաջին հերթին, «խմելու ջուրը» (88%) և «միրգ-բանջարեղենը» (86%), ինչպես նաև «մաքուր օդը» (85%): Ավելի ցածր են գնահատվել ավելի բարդ բնական ծառայությունները, ինչպիսիք են, ջրի պահումը/հեղեղների վերահսկումը (60%), վնասատուների կառավարումը (61%), բույսերի փոշոտումը (56%), էրոզիայի վերահսկումը (55%) և հողային շերտի ձևավորումն ու բերրիությունը (60%): Եթե գնահատականը «շատ կարևոր է» և գումարված է «կարևոր» գնահատականը, ապա բոլոր հարցերը 80-90%-ից բարձր են գնահատված:

Բնության օգուտների և էկոհամակարգային ծառայությունների կարևորությունը



Գծապատկեր 6. Բնության օգուտների և էկոհամակարգային ծառայությունների կարևորությունը

Ավելի ուշադիր դիտարկմամբ կարելի է տեսնել քաղաքային և գյուղական բնակավայրերի տարբերությունները՝ հետևյալ հարցերի շուրջ իրազեկության առումով. բույսերի փոշոտում (Երևան՝ 49%, գյուղեր՝ 59%), էրոզիայի կառավորում (49% և համ.՝ 60%), բնական վնասատուների կառավարում (52% և համ.՝ 68%) և հողային շերտի ձևավորում (57% և համ.՝ 65%), որտեղ գյուղական շրջանների բնակիչներն ունեն ավելի սերտ կապ և ավելի մեծ իրազեկություն: Մյուս հակադրվում է բուժական բույսերի բարձր արժեքը (B.2.9), որը քաղաքաբնակներն ավելի են արժևորում, քան գյուղական բնակչությունը (Երևան՝ 73%, գյուղեր՝ 64%): Ամենացածր գնահատականը տրվել է բնակչինսարարության նյութերի ապահովմանը (B2.10), երբ այս էկոհամակարգային ծառայությունը շատ կարևոր է գնահատում միայն 41%-ը (Երևան՝ 35%, գյուղեր՝ 41%): Անտառային/շինարարական փայտի և քարի/ցեմենտի ու հանքանյութի/պողպատի միջև կապերը, թերևս, լիարժեք հասկացված չեն հանրության կարծիքում: Այս առումով որևէ զգալի տարբերություն սեռերի միջև չկա:


Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգներ

Կենսաբազմազանությանը սպառնացող ամենամեծ («չափազանց շատ») սպառնալիքներն են օդի աղտոտումը՝ 85%, ջրի (գետեր/լճեր) աղտոտումը՝ 84%, անտառային հրդեհներն ու մարգագետինների այրումը (81%), թափոնների վատ կառավարումը՝ 79%, մարդածին աղետների հետևանքով առաջացած աղտոտումը (77%), անտառային պաշարների գերօգտագործումը՝ 74%, կենդանական և բուսական առանձնյակների կորուստը՝ 67%: Կլիմայի փոփոխությունը և բնական աղետները որպես սպառնալիք ընկալվել են 63%-ի կողմից: Մեծ մասշտաբային հիդրոէլեկտրակայանները որպես սպառնալիք են ընկալվել 52%-ի կողմից:

Սանդղակի ներքևի մասում՝ միայն 43%-ն է արտադրական մասշտաբի գյուղատնտեսությունն ու քիմիական պարարտանյութերի, թունաքիմիկատների ու հակաբիոտիկների օգտագործումն ընկալում որպես ռիսկ, և միայն 41%-ն է որպես ռիսկ ընկալում ուրբանիզացումն ու հողի կաղապարումը: Նաև՝ ինվազիվ տեսակները որպես սպառնալիք են ընկալվել 39%-ի կողմից: Զբոսաշրջության բացասական ազդեցությունները որպես սպառնալիք ընկալում է 24%-ը:


Էկոլոգիական գործոնները որպես կենսապահովմանը սպառնացող ռիսկ

Բազմաթիվ էկոլոգիական և այլ գործոններ կարող են ռիսկ առաջացնել ընտանիքների կենսապահովման համար (B5): Այսպիսի 16 գործոնների ցանկից հարցվածները ամենառիսկային են համարել օդի, ջրի և հողի աղտոտումը (89%՝ «շատ մեծ ռիսկ», և «մեծ ռիսկ»): Թափոնների ավելացող ծավալները որպես մեծ ռիսկ է ընկալվում 79%-ի կողմից: Կլիմայի փոփոխությունը որպես ռիսկ է ընկալվում հարցվածների 59%-ի կողմից, և այս հարցում գյուղերում ավելի մտահոգ են (64%), քան Երևանում (57%): Բնական աղետները որպես մեծ ռիսկ/շատ մեծ ռիսկ են ընկալվում 78%-ի կողմից, և այս հարցի շուրջ իրազեկությունն ավելի բարձր է գյուղերում (85%) և մարզերի քաղաքներում (81%), քան Երևանում (67%):



Գծապատկեր 7: Կենսապահովմանը սպառնացող ռիսկեր (1)

Կենսապահովմանը սպառնացող ռիսկերը



Գծապատկեր 8. Կենսապահովմանը սպառնացող ռիսկեր (2)

Կենդանիների և բույսերի վերացման հարցը (73%) ընկալվում է որպես ավելի մեծ ռիսկ, քան վարելահողի կորուստը (62%) կամ կոնֆլիկտը բնական պաշարների շուրջ (52%): Առողջական ռիսկերն, ընդհանուր առմամբ, (ալկոհոլ, արյան բարձր ճնշում և այլն) «բարձր» կամ «շատ բարձր» են հարցվածների 76%-ի մոտ, իսկ թունաքիմիկատները/հերբիցիդները որպես ռիսկ է տեսնում 67 %-ը: Քաղաքային խնդիրները (օրինակ՝ կանաչ տարածքների պակասը, օդի վատ որակը և երթևեկության խցանումները) որպես ռիսկ է տեսնում 61%-ը՝ (77% Երևանում, 46% գյուղերում): Գյուղացիներն էականորեն ավելի մտահոգված են հողի և խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կորստով, ինչպես նաև ջերմաստիճանի վրա կլիմայի փոփոխության հետևանքներով և բնական աղետներով: Գերբնակեցումը ռիսկ չի համարում կամ փոքր ռիսկ է համարում հարցվածների մեծամասնությունը գյուղերում և մարզերում (57%), իսկ Երևանում մեծամասնության ընկալմամբ կա մեծ կամ շատ մեծ ռիսկ (58%):

Վայրի բնության հետ շփումների ցածր մակարդակ

Ինչ վերաբերում է բնության հետ շփումներին (F.8), հարցվածների գրեթե կեսը (44%) երբեք չի գնում այնպիսի վայրեր, որտեղ կարելի է վայրի կենդանիներին տեսնել իրենց բնական միջավայրում: Անշուշտ, Երևանի (50%) և գյուղերի (37%) միջև տարբերություն կա: Բնակչության միայն 15%-ն է անցած տարվա ընթացքում աղվես տեսել Երևանում, իսկ գյուղերում՝ 42%-ը: Ընդհանուր առմամբ, հայաստանաբնակների գերակշռող մեծամասնությունն անցած տարվա ընթացքում (և հավանաբար նրանց մեծ մասը՝ երբեք) չի տեսել արջ, գայլ, շնագայլ կամ արծիվ, վայրի այծ, նապաստակ: Հետաքրքիր կլինի այս ամենը կապել բնության հետ կապված այլ փորձառություններին, ինչպիսիք են, արշավի գնալը կամ

ձիավարումը կամ շրջակա միջավայրին բնորոշ այլ հատկանիշների, օրինակ, ծաղիկների, ծառերի դիտման և այլնի հետ՝ հասկանալու համար, թե պրակտիկ գիտելիքի պակասը և ուղղակի ենթակայությունն ու մեղիայի միջոցով տեսական իրազեկությունն ինչպես են փոխկապակցվում և ինչպես կարող են նպաստել կամ չնպաստել բնապահպանական ակցիաներին: Տղամարդիկ ավելի ուղիղ շփման մեջ են բնության հետ, օրինակ՝ կանանց ավելի քան 70%-ն անցած տարվա ընթացքում ոչ մի վայրի կենդանի չի տեսել, իսկ տղամարդկանց տոկոսը տատանվում է 40-ից 60 տոկոսի սահմաններում՝ կախված կենդանատեսակից:


Կլիմայի փոփոխություն

Հայաստանում կլիմայի փոփոխության իմացությունը թվում է հատվածական և ինչ-որ չափով՝ խճճված: Օրինակ, հարցվածների 88%-ը գտնում է, որ կլիմայի փոփոխությունը վերաբերում է «եղանակի փոփոխությանը» (CC 1.1), և այս պատկերացումն ավելի տարածված է գյուղերում (93%), քան Երևանում (84%):

Մյուս կողմից, 82%-ի համար կլիմայի փոփոխությունը կապված է միջին ջերմաստիճանի փոփոխության հետ, 76%-ի համար՝ սեզոնի տևողության փոփոխության, 68%-ի համար՝ բացառիկ եղանակային պայմանների հաճախակիացման, իսկ 59%-ի համար՝ ծովի մակարդակի փոփոխության հետ: Այսպիսով՝ հարցվածների մեծամասնությունը ճիշտ է: Մի կողմից, կա հարցվածների մի ստվար զանգված, որը կլիմայի փոփոխությունը կապում է եղանակի փոփոխությանը (88%), օդի որակի փոփոխությանը (75%), անտառային ծածկույթի փոփոխությանը (62%) և ջրամատակարարման փոփոխությանը (63%), որտեղ կապն անուղղակի է՝ լավագույն դեպքում:

Կլիմայի փոփոխության մասին պնդումներին «ճիշտ է» կամ «ճիշտ չէ» պատասխանելիս մի փոքր ավելի մեծ տոկոսն է տվել ճիշտ պատասխան (CC 2): Ծովի մակարդակի բարձրացման հարցին «ճիշտ է» պատասխանն է տվել 59%-ը, «ծովային սահմաններ չունեցող երկիր» պնդմանը՝ 62%-ը, «ավելի վատ եղանակ» պնդմանը՝ «ճիշտ չէ» պատասխանն է տվել 45%-ը: «Տեղումների ավելացում» պնդմանը «ճիշտ չէ» պատասխանն է տվել 43%-ը, նոր վնասատուների կողմից մշակաբույսերի ոչնչացման մասին պնդմանը՝ «ճիշտ է» պատասխանն է տվել 65%-ը: Որոշ դեպքերում մեծամասնությունը նաև կողմ է արտահայտվել սխալ պատասխանին. «ճիշտ չէ» (46%) պատասխան են տվել փոթորիկների, հեղեղների և երաշտների ավելի մեծ հաճախականության մասին պնդմանը՝ ի հակադրություն ընդամենը 37% «ճիշտ է» պատասխանի, և հարցվածների 58%-ը նաև ընտրել է «ճիշտ է» պատասխանը անտառների ոչնչացման մասին պնդման համար:

Կլիմայի փոփոխության վերաբերյալ պնդումներ



Մեթոդաբանական առումով՝ կրկնակի ժխտում պահանջող հարցերը խնդրահարույց են թվում հատկապես գյուղաբնակների և տարեցների համար: Երևանում և մարզերի քաղաքներում հարցվածների մեծ տարբերությունը (համապատասխանաբար՝ 77% և 55%) այն պնդման վերաբերյալ, թե կլիմայի փոփոխությունը չի ազդելու Հայաստանի վրա, քանի որ վերջինս ծովային սահմաններ չունեցող երկիր է, կարելի է բացատրել այս կերպ: Նաև՝ երիտասարդների 71%-ն ընտրել է ճիշտ պատասխանը («ճիշտ չէ»)՝ ի տարբերություն 61+ խմբի 51%-ի:

Մեթոդաբանական կասկածների մեկ այլ տեղիք է տալիս այն հարցը, թե արդյո՞ք կլիմայի փոփոխությունը Հայաստանում մարդու գործունեության հետևանք է («ճիշտ է» 57%): Կլիմայի փոփոխությունն, անշուշտ, նաև Հայաստանում մարդու գործունեության հետևանք է, բայց ամենից ավելի՝ գլոբալ մասշտաբով մարդու գործունեության հետևանք է: Տոկոսային ցուցանիշը կարող է թաքցնել այս տարբերությունը:


Ինչ վերաբերում է բացառիկ եղանակային երևույթների փորձառությանը, անցած 5-10 տարիների ընթացքում պատկերը տարբեր է՝ սկսած «փոփոխություն չկայից» մինչև «ավելի ծայրահեղ» և «բարձր միջին ջերմաստիճան»: Դիտարկումները ցույց են տալիս «մի փոքր ավելի և շատ ավելի» ջերմային ալիքներ (գյուղերում՝ 46%, Երևանում՝ 57%), ցրտահարություններ (գյուղերում՝ 48%, Երևանում՝ 54%): 45%-ը նկատել է ձյան տեղումների նվազում, իսկ 30%-ը դա համարում է կոնստանտ վիճակ: Այս առումով տարիքային խմբերի միջև զգալի տարբերություններ չկան:

Երաշտային իրավիճակում փոփոխություն չի նկատել 41%-ը, երիտասարդներն ավելի քիչ փոփոխություն են նկատում քան տարեցները (18-30 տարիքային խումբ՝ 45% «փոփոխություն չկա», 61+ տարիքային խումբում՝ 39% «փոփոխություն չկա» պատասխան): Ավելի տարեցները նկատել են երաշտային վիճակների ավելացում (43%), այդ կարծիքին է գյուղերի բնակչության

46%-ը՝ ի տարբերություն Երևանի՝ 34%-ի: Այս դիտարկումների վերաբերյալ զգալի տարբերություններ սեռերի միջև չկա:

Էներգիա

Ջեռուցման և կերակրի պատրաստման (E1) համար օգտագործվող էներգիայի աղբյուրներից գլխավորը գազն է՝ քաղաքներում (93% Երևանում և 86% մարզերի քաղաքներում) և դեռևս 79% է գյուղերում: Վառելիքայտ օգտագործում է Երևանում հարցվածների ընդամենը 9%-ը, մարզերի քաղաքներում՝ 24%-ը, իսկ գյուղերում՝ 75%-ը: Գյուղերում ջեռուցման համար մեկ այլ կարևոր էներգիայի աղբյուր է գումաղբը՝ 32%: Էլեկտրաէներգիա օգտագործում է՝ Երևանում հարցվածների 93%-ը, մարզերի քաղաքներում հարցվածների 77%-ը և գյուղերում՝ 84%-ը: Այսպիսով երևում է, որ էլեկտրաֆիկացման մակարդակը բավականին բարձր է և, ուշագրավ է, որ գյուղերում արևային էներգիա է օգտագործում 12%-ը, ինչը բարձր է քաղաքների և Երևանի ցուցանիշից (երկուսը միասին՝ 4%): Հայաստանում այժմ շատ արագ զարգանում է արևային էներգետիկան:



Գծապատկեր 7. Էներգիայի աղբյուրների օգտագործումը տնային տնտեսություններում

Ինչ վերաբերում է սեռերի պարտականություններին և էներգիայի մասով աշխատանքներին (E8), գյուղերում որոշումներն ավելի շատ ընդունում են տղամարդիկ, կամ կանայք ու տղամարդիկ՝ համատեղ: Վառելիքայտ գնելու որոշումը կայացվում է տղամարդկանց կողմից՝ 44%, համ.՝ միասին 34%, իսկ զագամատակարարման որոշումը՝ տղամարդկանց կողմից և համատեղ՝ 43%: Նոր կաթսայի գնման որոշումը սովորաբար կայացնում են միասին (միասին՝ 42%, տղամարդիկ՝ 25%): Երևանում և մարզերի քաղաքներում հարցվածների մեծամասնությունը որոշումները կայացնում է «միասին» կամ հարցը գնահատել է որպես

իրենց վիճակի համար «ոչ կիրառական»: Որոշումների կայացման գործընթացում կանանց նկատելի գերիշխանություն չկա՝ առնվազն էներգիային վերաբերող թեմաներում:

Վառելափայտ

Շատերը գիտեն, որ չոր վառելափայտն ավելի լավ է այրվում (FW3) (95% գյուղերում, 86% մարզերի քաղաքներում): Մեծամասնությունը՝ 84%, առանց քաղաք-գյուղ տարբերակման, նախընտրում է ոչ թե գնալ անտառ, այլ փողով գնել վառելափայտը: Գյուղերում հարցվածների 35%-ն ավելի քան 25000 ՀՀ դրամ է վճարում 1 մ³ վառելափայտի համար (FW8), իսկ 43%-ը չէր ցանկանա ավելին վճարել չոր վառելափայտի համար: Մեծամասնությունը չգիտի, թե իրենք ինչքան են ծախսում վառելափայտի համար: Այդուամենայնիվ, մոտավորապես 35-40%-ը պատրաստակամ կլինի ավելին վճարել չոր վառելափայտի համար (FW8.1):


Մարդիկ ներդրում կկատարեն էներգիայի նոր աղբյուրներում, եթե դրանք վառելափայտից էժան լինեն (74%՝ գյուղերում, 54%՝ Երևանում) կամ եթե դրանք օգտագործման համար ավելի հարմար լինեն (66%՝ գյուղերում և 57%՝ Երևանում): Նաև առողջական հարցերն են կարևոր դեր խաղում ներդրումային որոշումներում՝ հարցվածների 64%-ի համար գյուղերում, 53%-ի համար՝ քաղաքներում և 55%-ի համար՝ Երևանում:

Արևային էներգիան, թերևս, նախընտրելի ներդրում է (50%՝ գյուղերում, 54%՝ մարզերում և 61%՝ Երևանում), ինչը վկայում է արևային էներգիայի նկատմամբ աճող հետաքրքրության մասին (ջերմային կամ ֆոտովոլտային էներգիայի տարբերակում չկա): Որպես համեմատություն նշենք, որ վառելիք խնայող կաթսաները շատ գրավիչ չեն (15%՝ գյուղերում, 21%՝ մարզերում և 9%՝ Երևանում): Տան ջերմամեկուսացման մեջ ներդրում կատարելը ևս չի ընկալվել որպես շատ գրավիչ. ընդամենը 18%-ն է միայն ասել, որ կդիտարկի դա:

Արոտների կառավարում

Հարցվածների 93%-ի համար արոտների կառավարումն արդիական թեմա չէ (P1): Մի քանի հարցվածներ, որոնց համար արոտները կարևոր են (ընդամենը՝ 98), չեն կարող ապահովել այս թեմայի վերաբերյալ ներկայացուցչական պատկեր: Հետաքրքրված հարցվողները կա՛մ կախված են արոտներից (51%), կա՛մ լրացուցիչ եկամուտ ունեն արոտներից (52%) (P2): Սոցիալական ավելի բարձր դիրքը մոտիվացիա է գյուղերում անասնազույս պահելու համար՝ 32%:


Արոտներից ստացվող օգուտները



Փճապատկեր 8. Օգուտներն արոտավայրերից

Ընդհանուր առմամբ, հարցվածների միայն 25%-ը գիտի արոտներին վերաբերող իրավական շրջանակի մասին (P3), իսկ 41%-ը կցանկանար իմանալ այդ մասին: Գյուղերում հետաքրքրվածության աստիճանը ցածր է: Հարցվածների 74%-ը ճիշտ գնահատական է տալիս այն պնդմանը, որը «արոտավայրերի պետության կամ համայնքի սեփականությունն են» (ճիշտ է) (P4): 69 %-ը (17 հարցվածներ) ճիշտ են գնահատում այն ենթադրությունը, որ «արածեցման ժամանակահատվածը սկսվում է աշնանը (սխալ է): Մյուս 26%-ը, որը ցանկանում է արածեցման սեզոնը լեռներում սկսել աշնանը, որևէ գաղափար չունի ձմռանն արածեցման մասին (7 հարցված): Հարցվածների 73%-ը ճիշտ գնահատական է տվել «ռոտացիոն արածեցման համակարգն օգտակար է» պնդմանը, բայց 66%-ը «տեղյակ չէ գերարածեցման» մասին (չնայած այն հանգամանքին, որ ռոտացիոն արածեցումը լուծում է գերարածեցման խնդիրը): Հարցվածների 69%-ը իրավացիորեն տեղյակ է, որ «գերարածեցումը կարող է արոտն անապատի վերածել» (կամ առնվազն մեծացնել էրոզիայի ռիսկերը/սողանքները):


Պնդումներ արոտներին վերաբերող օրենսդրության մասին



Գծապատկեր 9. Արոտները կարգավորող օրենսդրությանը վերաբերող պնդումներ


Մարդկանց մեծամասնությունը երբեք չի մասնակցել բնական պաշարների պահպանման կամ վերականգնման որևէ աշխատանքի: Միայն 18-30 և 31-45 տարիքային խմբերում՝ համապատասխանաբար 57%-ը և 51%-ը մասնակցել են անտառտնկման աշխատանքների: Բավականին հայտնի են միայն լեռնագոգերի վերականգնման և էրոզիայի կանխման կամ բնական վերականգնման նպատակով ցանկապատման աշխատանքները (P10):

Մասնակցություն հողի կայուն կառավարման աշխատանքներին



Գծապատկեր 10. Մասնակցությունը հողերի կայուն կառավարման աշխատանքներին


Արոտների կառավարման պարտականությունը (P11) համարվում է հողօգտագործողների (35%) կամ բոլոր քաղաքացիների պարտականություն (28%), այլ ոչ՝ տեղական իշխանությունների պարտականություն (12%): Երևանում հարցվածների 40%-ը գտնում է, որ դա պետության գործառույթն է, և միայն 9%-ն է դա համարում արտօգտագործողների պարտականություն, մինչդեռ գյուղերում միայն 27%-ն է համարում դա պետության կամ տեղական իշխանությունների գործառույթ, իսկ 33%-ը՝ արտօգտագործողների: Մարզերի քաղաքներում սեփական պարտականության ընկալումն ավելի բարձր է՝ 47%:



Գծապատկեր 11. Արոտների կառավարման գործառույթները

Կոնֆլիկտներն անասնազվախի տերերի և այլ հողօգտագործողների միջև (P9), օրինակ՝ բանջարեղեն ստանալիս կուլտուրաներ մշակողների և մրգատու այգիների տերերի, նկատվել են՝ համապատասխանաբար 18%-ի և 17%-ի կողմից: Անասնազվախի տերերի և անտառապահների միջև կոնֆլիկտներ արձանագրել է 17%-ը: Անասնազվախի տերերի և տեղական իշխանությունների միջև՝ արածեցման շուրջ կոնֆլիկտներ նկատվել է 15%-ը: 12%-ը կոնֆլիկտներ չի նկատել: Ընդամենը 231 մարդ է պատասխանել այս հարցին (P9):

Կոնֆլիկտներ անասնապահների և այլ շահակիցների միջև



Գծապատկեր 12. Կոնֆլիկտներ անասնապահի ունեցողների և այլ շահակիցների միջև

Արոտների հողօգտագործման հետազոտությունը թույլ կտա տարբեր տեսակետներ ստանալ Հայաստանի բարձրավանդակներում արոտների գերօգտագործման և թերօգտագործման վերաբերյալ: Համայնքների կառավարման դժվարությունները ոչ միայն վերաբերում են կարգավորումների իմացության պակասին կամ սեզոնների իմացության պակասին, այլ նաև խոտհունձի նպատակով տարածքներ մուտք գործելու դժվարություններին, ջրարբիացման կետեր կամ կացարաններ հասնելու դժվարություններին, որպեսզի գյուղերին մոտ գտնվող տարածքները չգերօգտագործվեն: Վերջերս խոշորացված համայնքների հարցերը ևս իրենց դերն են խաղում: Հողօգտագործողների թիրախային խմբի որակական հետազոտությունը ցանկալի է՝ Հայաստանում արածեցման ու արոտների կառավարման բարդ հարցերի/խնդիրների վերաբերյալ հուսալի տեղեկություններ ստանալու առումով:

Գյուղատաղրանք

Հայաստանաբնակները նախապատվություն են տալիս հայկական արտադրատեսակներին, որոնք իրենց կարծիքով ավելի լավն են ու ավելի բնական, քան մյուս արտադրատեսակները: Այս համոզմունքը միշտ չէ, որ բխում է իրենց սեփական արտադրական փորձառությունից: Գրեթե բոլոր հարցվածները (PRO1) (62%) չեն օգտվում արոտներից՝ խոտաբույսեր հավաքելու նպատակով, և միայն մոտ 38%-ն է դրանցից օգտվում սեփական սպառման նպատակով: Գյուղերում 54%-ն արոտներից/մարգագետիններից օգտվում է խոտաբույսեր հավաքելու նպատակով՝ ի տարբերություն քաղաքների/մարզերի՝ 42%, և Երևանի՝ 16%:

Ընդհանուր առմամբ, 88%-ը գտնում է, որ հայկական արտադրանքն ավելի առողջարար է ու ավելի քիչ քիմիկատներ է պարունակում, քան ներկրված ապրանքները: Բոլոր արտադրատեսակների, այդ թվում՝ մրգեր, բանջարեղեն, միս, պանիր, կաթ, կանաչիներ, վերաբերյալ այդ կարծիքին է ավելի քան 95%-ը, բացառությամբ մածունի՝ 80%: Այս առումով

քաղաքային և գյուղական շրջանների կամ տղամարդկանց և կանանց միջև տարբերություն չկա:


Հեղինակի կարծիքով արտադրատեսակներում թունաքիմիկատների կամ հակաբիոտիկների մնացորդային քանակությունների վերաբերյալ հանրային քննարկում չկա և լաբորատոր հետազոտություն ու վերլուծություն չի կատարվում: «Հայկական բնական մեղր»-ի շատ մեղվապահներ իրենց մեղուներին խնամելու համար թունաքիմիկատներ ու հակաբիոտիկներ են օգտագործում, և գինին չի կարող անցնել ԵՄ մաքուր ջրի ստանդարտ թեստը՝ թունաքիմիկատների պարունակության պատճառով: Խորհրդային գյուղատնտեսական համակարգն այս իմաստով լուրջ ժառանգություն ունի: Ինչ-որ չափով շուկայում դեռևս հնարավոր է գտնել թունաքիմիկատներ, որոնք ԵՄ-ում արգելված են: Այսպիսով, հայկական արտադրանքի ավելի բարձր որակն ու բնականությունը, թերևս, մեծապես փայփայված համոզմունք է. հնարավոր է՝ դա այդպես է որոշ արտադրատեսակների պարագայում, սակայն՝ ոչ ընդհանրապես: Հետաքրքիր կլինի խորացնել այս թեմայի ուսումնասիրությունը:

Տեղեկատվության աղբյուրներ

Տեղեկատվության խողովակներ

2016 և 2019 թվականներին՝ անցած 12 ամսվա ընթացքում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հիմնական խողովակները (SoI1) հարցվածների համար եղել են՝ հեռուստատեսությունը (36% և համ.՝ 80%), գումարած հեռուստատեսային ֆիլմերը (10% և համ.՝ 15%): Ինտերնետը և սոցիալական ցանցերը միասին՝ տատանվել են 23%-ի սահմաններում 2016 թվականին և, համապատասխանաբար, 54% է եղել ինտերնետի, 42%՝ սոցիալական ցանցերի ցուցանիշը 2019 թ.-ին: Այս վերջին երկու զանգվածային մեդիաների գնահատականը շատ ավելի բարձր է քաղաքներում, քան գյուղերում հարցվածների մոտ: Արձանագրվել է ընտանիքի, ընկերների, հարևանների կամ գործընկերների հետ միջանձնային հաղորդակցության կարևորությունը (7% և համապատասխանաբար՝ 32%), իսկ տպագիր մեդիայի դերը նվազել է՝ 2016 թ.-ին 12%, 2019 թվականին 23%: Այդուամենայնիվ, տարիքն էլ դեր ունի. երիտասարդ հարցվածներն ավելի շատ օգտվում են ինտերնետից և սոցիալական ցանցերից, իսկ հեռուստատեսությանն ու տպագիր մեդիային նախապատվություն են տալիս ավելի տարիքով խմբերը:

Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրները՝ 2019 թ. -ին 10%-ի և ավելի դեպքում (համեմատական 2016 և 2019 թթ.)




Գծապատկեր 16. Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության խողովակները ըստ դեպքերի ավելի քան 10%-ի, 2019թ. (2016 – 2019 թվականների համեմատություն)

Տեղեկատվության վստահելի աղբյուրները

2016 թ. ամենավստահելի կազմակերպությունները եղել են քաղաքական կուսակցությունները, որոնք պայքարում են շրջակա միջավայրի պաշտպանության համար, օրինակ՝ կանաչները (35%), բնապահպանական կազմակերպությունները, օր.՝ WWF (25%) և կազմակերպությունները (31%): Գիտնականները 5-րդ տեղում են (22%), նրանց հաջորդում են պետական կազմակերպությունները (16-21%): Ի տարբերություն 2016 թվականի՝ 2019 թվականին հնարավոր էին մի քանի պատասխաններ: Ինչ վերաբերում է բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության ամենավստահելի աղբյուրներին (SoI2) 2019 թվականին պետական և մարզային/տեղական իշխանությունները ստացել են 60%-ի և համապատասխանաբար 46%-ի վստահությունը, գիտնականները՝ 53%-ինը, իսկ բնապահպանական միությունները՝ 56%-ինը:

Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության վստահելի աղբյուրները՝ ավելի քան 10%-ի պարագայում, 2019թ. (2016 – 2019 թվականների համեմատություն)



Գծապատկեր. 17 Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության վստահելի աղբյուրները՝ ավելի քան 10%-ի պարագայում, 2019թ. (2016 – 2019 թվականների համեմատություն)

Ինչ վերաբերում է իշխանությունների և կազմակերպությունների նկատմամբ վստահությանը (SoI3)՝ պատկերը խառն է: Եթե կազմակերպությունները հայտնի են, ապա մարդիկ ավելի հակված են վստահելու, քան չվստահելու: «Հայանտառը» հայտնի չէ 37%-ին, և վստահելի չէ 26%-ի համար, Շրջակա միջավայրի նախարարությանը վստահում է 49%-ը, և չի վստահում 39%-ը: Հատուկ պահպանվող տարածքների գործակալությունը հայտնի չէ 45%-ին և վստահելի չէ 22%-ի համար: Մարզպետարաններին վստահում է 44%-ը, և չի վստահում 49%-ը, իսկ համայնքապետերին վստահում է 53%-ը, և չի վստահում՝ 41%-ը: ՀԿ-ների՝ վստահելի տեղեկատվության աղբյուր լինելու մասին հարց չի տրվել: Ընդհանուր առմամբ, տպավորություն է, որ անցած 3 տարիների ընթացքում նշանակալիորեն աճել է վստահությունը պետական հաստատությունների նկատմամբ:

Նախնական եզրակացություններ

Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում իրականացված՝ բնապահպանական խնդիրների KAP (գիտելիք, իմացություն, պրակտիկա) հետազոտությունները պատվիրվել էին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության (GIZ) կողմից՝ «Էկոսերվ՝ Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն հանուն Հարավային Կովկասում գյուղական շրջանների կայուն զարգացման» ծրագրի շրջանակներում: Հայաստանում դաշտային աշխատանքները՝ 1400 հարցազրույցներ ներառող ընտրանքի չափով, կատարվել են 2019 թ.-ի աշնանը: Հետազոտության արդյունքների վերլուծությունում՝ ըստ ստորև բերված թեմատիկ բաժինների, հիմնականում ներկայացված են խոշորացված արդյունքները, իսկ ժողովրդագրական տվյալների համեմատականները (տղամարդ/կին, երիտասարդ/տարեց և քաղաք/գյուղ) մասնավորեցվել են միայն այն դեպքերում, երբ տվյալները հատկապես ուշագրավ են թվացել և արժանի են եղել հատուկ ընդգծման:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ հայաստանաբնակների մեծամասնությունն ընդունում է բնության աստվածայնությունը և համակարծիք է, որ պետք է «պաշտպանել բնության ստեղծածը», որին պետք է հարգանքով վերաբերել: Ընդհանուր առմամբ, հայաստանաբնակներին մտահոգում է իրենց երկրի կոնկրետ էկոհամակարգերում կենսաբազմազանության կորուստը: Անհանգստություն է առաջացնում հատկապես անտառների, գետերի և լճերի կորուստը: Ըստ մարդկանց ընկալումների՝ կենսաբազմազանությանը սպառնացող ամենամեծ վտանգներն են օդի աղտոտումը, ջրի (գետեր/լճեր) աղտոտումը, անտառային հրդեհները և մարգագետինների այրումը, թափոնների վատ կառավարումը, արհեստածին աղետների հետևանքով աղտոտումը և անտառային պաշարների գերօգտագործումը:

Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտության արդյունքների, մարգային քաղաքներում ապրողներն ավելի քիչ են տեղյակ բնապահպանական հարցերից, քան Երևանի բնակչությունը, որն ունի տեղեկատվության մեծ հասանելիություն, ինչպես նաև գյուղերի բնակչությունը, որն ամենից ուղիղ շփման մեջ է բնության հետ:

Սեռերի միջև շատ քիչ տարբերություններ են հայտնաբերվել: Պատասխանների գրեթե բոլոր կատեգորիաներում սեռերի միջև տարբերությունները կազմել են առավելագույնը 1-3%: Որոշ տարբերություններ են հայտնաբերվել էկոլոգիապես անվնաս վարքագծին վերաբերող պատասխաններում: Էներգախնայող լամպեր ավելի շատ օգտագործում են տղամարդիկ, իսկ ավելի ցածր ջերմաստիճանի տակ լվացք են անում կանայք: Հարցված կանայք ավելի կարևորել են կրթության որակը, մինչդեռ տղամարդիկ ավելի կարևորել են կոռուպցիայի դեմ պայքարը: Կանայք նաև ավելի են կարևորել առողջ շրջակա միջավայրը, քան տղամարդիկ, ովքեր որպես առաջնահերթություն նախապատվություն են տվել տնտեսական առաջընթացին:

Մի շարք թեմաներում դրսևորվել են տարիքին բնորոշ տարբերություններ: «Բնությունը՝ որպես վայրի և խնամքի ենթակա» պատկերացմանը համակարծիք՝ 61+ տարիքային խմբի

43%-ը, իսկ 18-31 տարիքային խմբի՝ ընդամենը 21%-ը: Ընդհանուր առմամբ, ավելի տարիքով մարդիկ (62+ տարիքային խումբ) նաև ավելի քիչ պատրանքներ ունեն, քան երիտասարդները (18-31 տարեկաններ): Երիտասարդների 90%-ը նշում է, որ շրջակա միջավայրի համար ինչ-որ բան անելու հնարավորություններ կան, մինչդեռ ավելի տարիքովների միայն 69%-ն է այդ կարծիքին:

Շրջակա միջավայրի (թեմաներ, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը) տեսական իմացության մակարդակն ավելի բարձր է երիտասարդ հարցվածների շրջանում (18-31 տարիքային խումբ) և Երևանում, մինչդեռ բնական պաշարների (օր.՝ արոտներ, կենդանիներ տեսնելը, գիտելիքը բույսերի փոշոտման մասին և այլն) մասով փորձառության մակարդակն ավելի բարձր է գյուղերում և 46-60 ու 61+ տարիքային խմբում:

Այս հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում բնապահպանական խնդիրների մասին իրազեկությունը բավականին մեծ է, նաև պատրաստակամություն կա էկոլոգիապես անվտանգ գործելու, եթե լինեն համապատասխան հնարավորություններ: Այստեղ անհրաժեշտ է տեսական և գործնական գիտելիքի մասերը կապել ու ձևավորել տարբեր թեմաների շուրջ կապակցված հանրային կարծիք (օր.՝ կլիմայի փոփոխության վտանգները, քիմիկատների/թունաքիմիկատների խնդրահարույց օգտագործումը գյուղատնտեսությունում, էներգախնայող և էներգաարդյունավետ շինանյութերի օգտագործման խթանումը): Իդեալական տարբերակում այս ամենը պետք է ուղեկցվի շարունակական պետական աջակցությամբ, որը դրսևորվելու է կոռուպցիայից զերծ բնապահպանական իրավակարգավորման շրջանակի ապահովմամբ և դրա կիրարկմամբ, ինչպես նաև հանուն էկոլոգիապես անվտանգ գործելակերպերի սեփականության և շահադրդվածության ձևավորմամբ (օր.՝ խթաններ, աջակցություն բնապահպանական կարծիք ձևավորող նախաձեռնողական լիդերներին): Ըստ ամենայնի, հարցվողներին հետաքրքրող բնագավառներն են արևային էներգիան (ջերմային և ֆոտովոլտային) և բնական պաշարների, օրինակ՝ արոտների ու անտառային պաշարների կայուն կառավարումը՝ համակցված էկոհամակարգային ծառայություններով: Գետերն ու լճերն այն էկոհամակարգերն են, որ հայաստանաբնակների ընկալմամբ ամենավտանգվածներն են, ինչը կարող է սկզբնակետ լինել կենսաբազմազանության շուրջ հետաքրքիր խոսակցության համար, որը հիմնվում է մարդկանց մասնակցության վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Տեխնիկական և մեթոդաբանական մոտեցում և հարցեր

ՄԱՍ 1. Ընտրանքի կառուցվածք	37
Սկզբնական ընտրանքային միավորներ.....	37
Երկրորդային ընտրանքային միավորներ.....	37
Երրորդային ընտրանքային միավորներ.....	37
Ընտրանքի կշիռներ.....	40
ՍԸՍ քարտեզ	41
ՄԱՍ 2. Պատահական մեթոդով այցելության ընթացակարգ.....	42
ՄԱՍ 3. Տեխնիկական և մեթոդաբանական մոտեցում.....	46
Տեխնոլոգիական մոտեցում	46
Մեթոդաբանական մոտեցում	48
ՄԱՍ 4. Խնդիրներ.....	50

Պատահական մեթոդով այցելության ընթացակարգ

ՄԱՍ 1. Ընտրանքի կառուցվածք

Սկզբնական ընտրանքային միավորներ

Ինչպես 2016 թվականի նախորդ հետազոտության մեջ, սկզբնական ընտրանքային միավորները (ՍԼՄ-ներ) ընտրատեղամասերն էին: Ընտրատեղամասերն իդեալական են այս նպատակի համար, քանի որ ամբողջ երկրում դրանք չափերով համեմատաբար միանման են, այդպիսով՝ վերացնելով ընտրության հավելյալ փուլերը, նախքան տնային տնտեսություններ: Եթե բնակավայրերը (գյուղերը, ավանները և քաղաքները) ընտրվում են որպես ՍԼՄ-ներ, ապա մեծ ՍԼՄ-ները պետք է համապատասխանաբար բաժանվեն ավելի փոքր միավորների, և դրանք պետք է ընտրանքի ենթարկվեն: Ընտրատեղամասերի պարագայում, սակայն, մեծ բնակավայրերը բաղկացած են բազմաթիվ ՍԼՄ-ներից, իսկ փոքր գյուղերը ընդամենը մեկից: Քաղաքը, որպես այսպիսին, ընտրանքի չի ենթարկվում. ընտրանք է բավականին փոքր աշխարհագրական տարածքը քաղաքի սահմաններում, և ընտրության հավելյալ փուլերի անհրաժեշտություն չկա:

ՍԼՄ-ի մակարդակում երկրները բաժանվել էին քաղաքային և գյուղական շերտերի, և ընտրանքի էին ենթարկվում իրարից առանձին: Քանի որ յուրաքանչյուր ՍԼՄ-ի հաշվով հարցազրույցների թիվը մնացել էր անփոփ, ապա ՍԼՄ-ներն ընտրվում էին մեծությանը համաչափ հավանականությամբ (ՄՀՀ)՝ տնային տնտեսությունների ընտրության հավանականությունները ՍԼՄ-ների միջև հավասարեցնելու և հավաքագրված տվյալների հիման վրա գնահատումների ճշգրտությունն առավելագույնի հասցնելու նպատակով:

Երկրորդային ընտրանքային միավորներ

Ինչպես 2016 թվականի նախորդ հետազոտության մեջ, երկրորդային ընտրանքային միավորները (ԵրկԸՄ) տնային տնտեսություններն են, և դրանք ընտրվել են երթուղու պատահական մեթոդով: GORBI-ն հայաստանյան գործընկերների հետ համագործակցության շրջանակում մշակել է պատահական մեթոդով այցելության լավ ընթացակարգ, որով յուրաքանչյուր հետազոտության պարամետրերը հարմարեցրվել են յուրաքանչյուր երկրի տեղական համատեքստին: Հայաստանի մասով ընթացակարգը նույնպես ներառված է հավելվածում: Պատահական մեթոդով այցելության ընտրանքը լայնորեն ընդունված է որպես պարզ պատահական ընտրանքի (ՊՊԸ) համապատասխան մոտարկում, և տվյալները մշակվում են որպես այդպիսիք:

Երրորդային ընտրանքային միավորներ

Ինչպես 2016 թվականի նախորդ հետազոտության մեջ, երրորդային ընտրանքային միավորները (ԵրրԸՄ) և դիտարկման միավորները անհատներն էին: Բազային հետազոտության հետ առավելագույն համատեղելիություն ապահովելու նպատակով ԵրրԸՄ-ներն ընտրվել են օգտագործելով քվոտավորման նույն համակարգը ինչ նախկինում, որտեղ յուրաքանչյուր սեռ խմբավորվում էր վեց տարիքային խմբերի: Քանի որ պատվիրատուն ցանկանում էր 12 տարիքային/սեռային կատեգորիաներ, իսկ ՍԼՄ-ի ընտրանքային մեծությունները 10-ից ավելի չէին, ապա լուծումը եղավ հետևյալը. նախ պատվիրվեցին և համարակալվեցին ժողովրդագրական խմբերը:

Ժողովրդագրական խումբ	Սեռ	Տարիքային կատեգորիա
1	Արական	18-24 տարեկան
2	Արական	25-34 տարեկան
3	Արական	35-44 տարեկան
4	Արական	45-54 տարեկան
5	Արական	55-64 տարեկան
6	Արական	65+ տարեկան
7	Իգական	18-24 տարեկան
8	Իգական	25-34 տարեկան
9	Իգական	35-44 տարեկան
10	Իգական	45-54 տարեկան
11	Իգական	55-64 տարեկան
12	Իգական	65+ տարեկան

Քանի որ ՍԸՄ ընտրանքի ալգորիթմով ընտրությունը կատարվել է ինչպես մեծությանը համաչափ հավանականության (ՄՀՀ) միջոցով, այնպես էլ՝ սիստեմատիկորեն, ընտրանքի ենթարկված ՍԸՄ-ների ցանկն ավտոմատ դուրս է բերվել ըստ շերտի, իսկ հաջորդիվ՝ ըստ աշխարհագրական դիրքի շերտերի սահմաններում: Ցանկով շարժվելիս հատկացված քվոտաները հերթափոխվում էին՝ ամեն անգամ երկուսով փոխատեղվելով: Օրինակ, եթե ՍԸՄ #97-ն ուներ քվոտա բոլոր խմբերի համար, բացի 6-ից և 7-ից, ապա ՍԸՄ #98-ը կունենար քվոտա բոլոր խմբերի համար, բացառությամբ 8-ի և 9-ի: Ոչ թե մեկ, այլ երկու քվոտաների փոխատեղման պատճառն էր ապահովել, որ միևնույն ժողովրդագրական խումբը չվրիպեր երկու հարևան ՍԸՄ-ներում:

Առաջացավ ևս մեկ լրացուցիչ խնդիր. այն է՝ որոշ շերտերին հատկացված մասն անխուսափելիորեն փոքր էր: Եթե ընդամենը մեկ ՍԸՄ էր հատկացվել որևէ շերտի, և տվյալ շերտի շրջանակում երկու հարցազրույց բաց էր թողնվել, ապա այդ երկու ժողովրդագրական խմբերն այդտեղ կլինեին ամբողջությամբ չներկայացված: Եղավ երկակի լուծում. առաջին՝ մեկ շերտի հաշվով ՍԸՄ-ների նվազագույն քանակը սահմանվեց երկուսը: Երկրորդ՝ ընդամենը երկու շերտեր ունեցող ՍԸՄ-ներում՝ մեկ շերտի հաշվով ընտրանքի մեծություններն

ավելացվեցին մինչև 12-ը, և ոչ մի ժողովրդագրական խումբ բաց չթողնվեց: Արդյունքն այն էր, որ յուրաքանչյուր շերտ ունեցավ յուրաքանչյուր ժողովրդագրական խմբի առնվազն երկու անդամների քվոտա, և դա ամփոփվում է հետևյալ աղյուսակում:

Հայաստան				
Շերտ		Ընտրողներ	ՍԸՄ-ներ	Քվոտա մեկ ՍԸՄ-ի հաշվով
1	Երևան	849,965	41	10
2	Արագածոտն քաղաքային	42,852	2	12
3	Արագածոտն գյուղական	74,834	4	10
4	Արարատ քաղաքային	61,715	3	10
5	Արարատ գյուղական	159,824	9	10
6	Արմավիր քաղաքային	84,248	5	10
7	Արմավիր գյուղական	150,105	8	10
8	Գեղարքունիք քաղաքային	63,303	3	10
9	Գեղարքունիք գյուղական	127,858	7	10
10	Կոտայք քաղաքային	147,878	8	10
11	Կոտայք գյուղական	92,248	5	10
12	Լոռի քաղաքային	148,425	8	10
13	Լոռի գյուղական	89,042	5	10
14	Շիրակ քաղաքային	139,780	8	10
15	Շիրակ գյուղական	90,019	5	10
16	Սյունիք քաղաքային	83,435	5	10
17	Սյունիք գյուղական	31,692	2	12
18	Տավուշ քաղաքային	65,791	4	10
19	Տավուշ գյուղական	42,982	2	12

20	Վայոց Ձոր քաղաքային	21,167	2	12
21	Վայոց Ձոր գյուղական	25,473	2	12
Ընդամենը		2,592,636	138	

Յուրաքանչյուր տնային տնտեսությունում հարցազրուցավարներին հրահանգվել էր վերհանել այն ժողովրդագրական խումբը, որտեղ (Ս) առկա էր տնային տնտեսության անդամ, (Բ) նրանք դեռևս չեն իրականացրել հարցազրույց տվյալ ՍԸՄ-ի հետ, և (Գ) նրանք, ընդհանուր առմամբ, ունեն ամենամեծ դժվարությունը՝ որպես հարցվողի տեղորոշելու հարցում: Եթե տվյալ տնային տնտեսության անդամը չէր ցանկանում հարցազրույց ունենալ, ապա հարցազրուցավարներին թույլատրվում էր թիրախավորել հաջորդ ամենամեծ առաջնահերթության ժողովրդագրական խմբի տնային տնտեսության անդամին, որի մասով ՍԸՄ-ում լրացում չէր կատարվել:

Ընտրանքի կշիռներ

Ընտրանքային կշիռները հաշվարկվել էին բազմաթիվ փուլերում: Փուլ 1-ի ընտրանքային կշիռը հանդիսանում է ՍԸՄ ընտրության հավանականության հակադրությունը,

$$w_{1,i,S} = \frac{\sum_i V_{i,S}}{n_S V_{i,S}}$$

Այլ կերպ ասած՝ փուլ 1-ի ընտրանքային կշիռը S շերտում i ՍԸՄ -ի համար հավասար է i շերտում բոլոր ընտրատեղամասերի գրանցված ընտրողների ընդհանուր թիվը ($\sum_i V_{i,S}$)՝ բաժանված շերտում ընտրանքի ենթարկված ընտրատեղամասերի թվի (n_S) և i ՍԸՄ-ում գրանցված ընտրողների թվի ($V_{i,S}$) արտադրյալի վրա:

Փուլ 2-ի ընտրանքային կշիռը հանդիսանում է յուրաքանչյուր ՍԸՄ-ում յուրաքանչյուր առանձին ժողովրդագրական խմբի անդամի մասով գնահատված ընտրության հավանականության հակադրությունը: Քանի որ ժողովրդական խմբին ներհատուկ բնակչության հանրագումարները հայտնի չէին, ապա դրանք գնահատվեցին օգտագործելով ՍԸՄ-ում գրանցված ընտրողների թիվը և մեծահասակ բնակչության յուրաքանչյուր տարիքային խմբի մասնաբաժինների վերաբերյալ մարդահամարի տվյալները:


$$w_{2,j,i} = \frac{\widehat{M}_{j,i}}{1}$$

Այլ կերպ ասած՝ փուլ 2-ի ընտրանքային կշիռը i ՍԸՄ-ում j ժողովրդագրական խմբի անհատի համար հավասար է i ՍԸՄ-ում j ժողովրդագրական խմբի անհատների հաշվարկված թիվը ($\widehat{M}_{j,i}$)՝ բաժանված ընտրանքի ենթակված թվի վրա:

Բազային կշիռները հաշվարկվել են որպես փուլ 1-ի և փուլ 2-ի կշիռների հանրագումար: Փուլ 1-ի կշռի հայտարարում ընտրատեղամասի մեծությունը հավասարակշռում է, որով հաշվվել է փուլ 2-ի կշռի համարիչը՝ օգնելով նվազեցնել ընտրանքի կշիռների փոփոխականությունը:

Այնուհետև դրանք նվազեցվել են 99-րդ պրոցենտիլի և մասշտաբավորվել՝ հասցնելով մինչև ընտրանքի ընդհանուր մեծությանը:

ՄՀՄ-ների քարտեզ



ՄԱՍ 2. Պատահական մեթոդով այցելության ընթացակարգ

Հարցազրուցավարներին հասկացվում է պատահական մեթոդով ընտրված մեկնարկային հասցե և քայլի մեծություն յուրաքանչյուր ընտրանքային կետի համար: Երևանում և մեծ քաղաքներում քայլի մեծությունը 6-ն է, փոքր քաղաքներում՝ 4-ը, իսկ գյուղական վայրերում/գյուղերում՝ 3-ը: Հարցազրուցավարներն իրենց ղեկավարից ստանում են հասկացված քայլի մեծությունը: Պատահական մեթոդով այցելության ընթացքում հարցազրուցավարները հաշվում են միայն բնակության վայրերը. խանութները, գործարանները և այլ օբյեկտներ անտեսվում են: Հարցազրույցի անցկացման չհաջողված փորձերի դեպքում քայլի մեծությունը չի փոխվում:

Պատահական մեթոդով այցելությունը կատարվում է մեկնարկային հասցեից (փողոցի անվանում, տան համար և բնակարանի համար): Քանի որ մեկնարկային հասցեն ընտրվում է պատահական մեթոդով, ապա այդ հասցեն պետք է թիրախավորվի հարցազրույցի համար: Որպես առաջին փորձ արված տվյալ հարցազրույցից հետո հարցազրուցավարները կատարում են պատահական մեթոդով այցելություն՝ համաձայն ստորև ներկայացված կանոնների: Երթուղով հարցազրուցավարի ողջ տեղաշարժը գրանցվում է ուղեցույց գրքում:

Արգելվում է փոխել մեկնարկային հասցեն, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Մեկնարկային հասցեն այլևս գոյություն չունի: Պարզաբանում. չկա նման փողոց, չկա այդպիսի տան համար, տունը քանդվել է, չկա այդպիսի շենքերի թաղամաս, փողոցը քանդվել է և այլն: Այդ դեպքում հարցազրուցավարը պետք է ղեկավարից ստանա այլ մեկնարկային հասցե և դա արձանագրի երթուղու ցանկում:
- Մեկնարկային հասցեն բնակելի չէ: Պարզաբանում. վարչական շինություն, կրթական/բժշկական հաստատություն, հյուրանոց, խանութ. տունը դեռևս չի բնակեցվել շինարարությունից հետո, այն արդեն իսկ տարհանվել է նախքալ քանդումը, այն ամառանոց է, որը մշտապես բնակեցված չէ և այլն: Հարցազրուցավարը շարժվում է այնպիսի ուղղությամբ, որտեղ հասցեների համարներն աճում են, և սկսում հաջորդ գոյություն ունեցող տնից: Այս փաստն արձանագրվում է երթուղու ցանկում:
- Մեկնարկային հասցեն այնպիսի տան/հոսթելի հասցե է, որը չունի բնակարանների սեփականաշնորհման հնարավորություն: Հարցազրուցավարը շարժվում է այնպիսի ուղղությամբ, որտեղ հասցեների համարներն աճում են, և սկսում հաջորդ գոյություն ունեցող տնից: Այս փաստն արձանագրվում է երթուղու ցանկում:

Շարժը շենքերի ներսում և իտալական բակերում

Փորձ արեք կատարել հարցազրույց մեկնարկային հասցեում, զորօրինակ՝ շենքի ներսում գտնվող առանձին բնակարանում: Հաջորդիվ շարժվեք այնպիսի ուղղությամբ, որտեղ բնակարանների համարներն աճում են՝ փորձելով հարցազրույց կատարել յուրաքանչյուր ուղղությամբ բնակարանում (3, 4 կամ 6՝ կախված Ձեր հանձնարարությունից): Ամենավերին հարկ հասնելուց հետո հարցազրուցավարը պետք է դուրս գա շենքից: Խորհրդային

Ժամանակաշրջանի մեծ կորպուսների պարագայում հարցազրուցավարը պետք է մուտք գործի շենք ոչ թե մեկից ավելի մուտքերով, այլ անցնի դեպի հաջորդ շենքը:



Մուտքեր դեպի խորհրդային ժամանակաշրջանի մասնաշենք: Եթե պատահական մեթոդով այցելության շրջանակում ներառված են եղել կանաչ շրջանակի մեջ պատկերված մուտքի միջոցով մուտքը դեպի բնակարաններ, ապա հաջորդ մուտքերը պետք է բաց թողնել:


Իտալական բակերի ներսում, որտեղ առանձին հասցեները կարող է տեսանելի չլինեն, հարցազրուցավարները պետք է գտնեն նշված մեկնարկային հասցեն և հետո պարզապես շարժվեն բակի ողջ տարածքով ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Եթե որևէ բնակարան գտնվում է անմիջապես մեկ ուրիշի վրա, ապա ավելի ներքև գտնվող բնակարանները պետք է առաջինը հաշվվեն: Եթե կան իտալական բակերի շարքեր, ապա պետք է բաց թողնել երկու բակ յուրաքանչյուր այն բակերի միջև, որտեղ հաշվվել են բնակարաններ:



Առաջակողմում պատկերված կանաչ սլաքը մատնանշում է դեպի իտալական բակ տանող մուտքը: Եթե տվյալ բակում գտնվող տնային տնտեսությունները հաշվվել են, ապա դեպի իտալական բակեր տանող հաջորդ երկու մուտքերը (որոնք նշված են կարմիր սլաքներով) պետք է բաց թողնել. իսկ հաշվարկը կրկին վերսկսվում է հետնամասում գտնվող բնակարանային շենքում (որը նույնպես նշված է կանաչ սլաքով):

Շարժը փողոցում

Հարցազրուցավարները միշտ ճշգրտորեն մեկնարկում են՝ հաշվի առնելով տան մեկնարկային համարը (զույգ կամ կենտ)՝ մնալով փողոցի մեկնարկային կողմում: Նրանք շարժվում են այն ուղղությամբ, որտեղ հասցեներն աճում են: Նրանք փորձում են հարցազրույցներ անել յուրաքանչյուր ու-րդ բնակության վայրում (3, 4 կամ 6՝ կախված հանձնարարությունից), շարժվելով տնից-տուն համարների աճողական կարգով. օրինակ՝ 66, 68, 70, և այլն: Փողոցի վերջին հասնելուն պես՝ նրանք շրջվում են դեպի ձախ: Եթե չկա դեպի ձախ տանող ուղղահայաց փողոց, ապա հարցազրուցավարը կարող է թեքվել աջ: Եթե փողոցն ամբողջությամբ փակուղի է տանում, ապա հարցազրուցավարը պետք է շարժվի դեպի հաջորդ զուգահեռ փողոցը և շարունակի այնտեղ հաշվել բնակության վայրերը:




Այս օրինակում հարցազրուցավարը հասնում է Բոլքվաձե փողոցի վերջին, իսկ այնտեղ իսկական փակուղի է: Հարցազրուցավարը վերադառնում է այն վերջին տեղը, որտեղից նա կարող էր թեքվել աջ (որ հիմա ձախ տանող առաջին ճանապարհն է), քայլում է դեպի ամենամոտ զուգահեռ փողոցը և այդ փողոցում շարունակում է պատահական մեթոդով այցելությունը: Փակուղու և զուգահեռ փողոցի միջև ընկած հատվածում հարցազրուցավարը չի հաշվում տնային տնտեսությունները:

Երթուղու կանոնները գյուղերում

Քանի որ շատ գյուղական բնակավայրերի բնակիչներ չունեն հասցեներ, ապա հարցումը սկսվում է հիմնական փողոցից: Եթե կան մի քանի փողոցներ, ապա դրանցից ընտրվում է ամենամեծ (երկար) փողոցը: Հարցազրուցավարը փորձում է հարցազրույցը վարել ձախ կողմում գտնվող առաջին տանը: Բոլոր գյուղական ենթաընտրատեղամասերի համար քայլի մեծությունը 3-ն է: Անկախ նրանից, թե հարցազրույցը կատարվել է, թե ոչ, հարցազրուցավարը պետք է բաց թողնի երկրորդ և երրորդ տները և փորձի հարցազրույց կատարել չորրորդ տանը:

Գյուղերի համար այցելության ցուցումները նույնպես տարբերվում են քաղաքների և ավանների համար նախատեսված ցուցումներից: Հիմնական փողոցի վերջում հարցազրուցավարը պետք է անցնի փողոցի մյուս կողմը և շարունակի հաշվել տնային տնտեսությունները իր եկած տեղից հակառակ ուղղությամբ: Եթե հարցազրուցավարը ետ է վերադառնում դեպի մեկնարկային կետ առանց ունենալու պահանջված թվով հարցազրույցներ, ապա նա պետք է քայլի փողոցն ի վար՝ տների աճողական համարների

հերթականությամբ դեպի առաջին հատման կետը: Այնուհետև նա պետք է այդտեղից թեքվի դեպի ձախ և կրկնի ընտրանքի ընթացակարգը նոր փողոցում:



Գյուղերում կիրառվող պատահական մեթոդով այցելությունը պատկերող գծապատկեր:

Եթե նշված քայլերը կրկնելով՝ հարցազրուցավարը չի կարողանում փորձել կատարել անհրաժեշտ թվով հարցազրույցները, ապա հարցազրուցավարը պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնի իր ղեկավարին:

Տնային տնտեսության հետ կապ հաստատելը

Շփումը տնային տնտեսության հետ կարող է լինել չհաջողված, ինչը պայմանավորված է մի շարք պատճառներով.

- Կարող է պարզվել, որ տունը բնակելի չէ, ասենք՝ բնակարանն օգտագործվում է որպես գրասենյակ,
- Տանը մարդ չկա,
- Դուրը չի բացվում, կամ դուք պարզապես ի վիճակի չեք մտնել շենք,

- Տնային տնտեսության անդամը հրաժարվում է:

Ցանկացած նման դեպքերում հարցազրուցավարը պետք է շարունակի իր երթուղին: Հարցազրուցավարը չի կարող պարզապես ընտրել հաջորդ բնակարանը, այլ պարտավոր է կատարել մեկ ամբողջական քայլի մեծություն՝ նախքան հաջորդ հարցազրույցի փորձ կատարելը: Եթե դուրը բացվում է և մերժում չի ստացվում, ապա հարցազրուցավարը պետք է հարցազրույցի համար ընտրի տնային տնտեսության որևէ անդամի:

Քվոտայի հատկացումներ

Հարցազրուցավարը հղում է կատարում իր անհատական քվոտաների հատկացմանը: Հատկացումները տարբերվում են ըստ ընտրանքի կետի: Մայրաքաղաքից դուրս գտնվող որոշ ընտրանքի կետերում պահանջվում է մեկ հարցազրույց յուրաքանչյուր ժողովրդագրական խմբի հետ: Սակայն ընտրանքային կետերի մեծ մասում հարցազրուցավարին հատկացվում է ընդհանուր 12 ժողովրդագրական խմբերից 10-ը:

Հարցազրուցավարը պետք է նախ որոշարկի տնային տնտեսության չափահաս անդամներին, որոնք կարող են մասնակցել հարցազրույցին: Այնուհետև նա պետք է հղում կատարի Ձեր փոխանցած ցանկին և որոշարկի այն ժողովրդագրական խումբը, որտեղ (Ա) առկա է տնային տնտեսության անդամ, (Բ) նրանք դեռևս հարցազրույց չեն ունեցել դրա հետ և (Գ) նրանք, ընդհանուր առմամբ, ամենամեծ դժվարությունն են ունենում որպես հարցվողի տեղորոշելու հարցում: Եթե տնային տնտեսության տվյալ անդամը չի ցանկանում մասնակցել հարցազրույցին, ապա հարցազրուցավարը կարող է ընտրել տնային տնտեսության այլ ներկա անդամներից: Սակայն, եթե հարցազրուցավարը չի կարող հարցազրույց կատարել տվյալ տնային տնտեսությունում, ապա նա պետք է կատարի մեկ լրիվ քայլ (6՝ տնային տնտեսություններ մեծ քաղաքներում, 4՝ տնային տնտեսություններ այլ քաղաքային վայրերում և 3՝ տնային տնտեսություններ գյուղական վայրերում) նախքան այլ տնային տնտեսության հետ շփվելու փորձ կատարելը:

ՄԱՍ 3. Տեխնիկական և մեթոդաբանական մոտեցում

Տեխնոլոգիական մոտեցում

Հարցումների համար GORBI-ի կողմից օգտագործվող տեխնոլոգիան և մոտեցումը մրցակցային է և բացառիկ այս տարածաշրջանում: Կազմակերպությունը հսկայական աճ է գրանցել շնորհիվ այն ուշադրության, որ այն հատկացնում է առկա ամենավերջին տեխնոլոգիաների որդեգրմանը: Օրինակ SS վարչությունը զինված են տվյալների ներքին և արտաքին կառավարման և պահպանման, CAPI, CATI, և CAWI հավաքագրման մեթոդաբանություններով, ԳՏՀ/GPS-ի կարողություններով յոթ երկրներում դաշտային աշխատանքի որակի հսկողությամբ, ինչպես նաև ֆոկուս խմբի ապահովման միջոցներով՝ իր հաճախորդներին համապատասխան դաշտային աշխատանքի ուղիղ լուսաբանում տրամադրելու ունակությամբ:

GORBI-ն նախաձեռնել է GPS մեթոդաբանության օգտագործումը Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մոլդովայում և Բելառուսում, և ապահովում է տվյալների իրական ժամանակում հավաքագրման մեթոդը GSM-ով աշխատող պլանշետների միջոցով տվյալների հավաքագրում կատարելիս: Ընկերությունը մշակել է նաև հատուկ ծրագիր, որը սինխրոնիզացնում է GPS-ի ցուցմունքները հարցազրույցի ID-ների, կատարված հարցազրույցների ժամերի և այլ կարևոր փոփոխականների հետ: Ծրագիրն ունի դաշտից տվյալներն անմիջապես արտաբեռնելու, հարցազրույցի ժամը գրանցելու և GPS սարքերի հետ անմիջապես ինտեգրելու կարողություն: 2008 թ. Հարավային Կովկասի տարածաշրջանում GORBI-ն եղել է առաջին հետազոտական ընկերությունը, որն օգտագործել է GPS սարքերը դաշտային աշխատանքների ընթացքում:

Տվյալների հավաքագրման տեխնոլոգիա

Վերջին 25 տարիների ընթացքում GORBI-ն զգալիորեն զարգացել է փորձի, փորձառության և տեխնոլոգիայի առումով: Հարցման միջոցով կատարվող հետազոտություններում ձեռքի սարքերի օգտագործումը խրախուսել է ընկերությանը սարքակազմի և ծրագրային լուծումներում ներդրումներ կատարելու հարցում: GORBI-ն մշակել է տվյալների մշակման իր սեփական արտոնագրված ներքին ծրագիրը, որը գերազանցում է միջազգային հետազոտական ոլորտի կողմից օգտագործվող տեխնոլոգիական պահանջները: Հայաստանում բոլոր հարցազրույցները կատարվել են համակարգչային ծրագրի միջոցով անցկացվող անհատական հարցազրույցների (CAPI) մեթոդով:

GORBI-ն հայերեն լեզվով գրել է հարցաշարեր և ցուցումներ տվել առ այն, թե ինչպես տեղադրել հարցման մոդուլները պլանշետներում: Անցկացվում են համապարփակ թեստեր նախքան պիլոտային հարցազրույցներ կատարող աշխատողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացները:

Տվյալների անվտանգություն

Դաշտից բոլոր տվյալներն ուղղվում են Թբիլիսիում գտնվող GORBI-ի սերվերների հիմնական սրահ: SS վարչությունը տիրապետում է նորագույն տեխնոլոգիայի և համալրված է SS մասնագետներով, ովքեր ունակ են օգտագործել այս գործիքները տվյալների հավաքագրման շրջափուլի բոլոր փուլերի ընթացքում: 2016 թ. GORBI-ին հիմնովին կատարելագործեց իր ամբողջ SS ենթակառուցվածքը՝ առավել ապահով և անվտանգ տվյալների պահեստ ստեղծելու համար, որը ներառում է չթույլատրված մուտքից պաշտպանված հատուկ սերվերների սրահ և բարձր հզորությամբ սերվերներ, որոնք պաշտպանված են ամենաժամանակակից արգելապատնեշով /firewall/ և VPN թունելավորման տեխնոլոգիայով: Սա թույլ է տալիս, որպեսզի տվյալները ուղղակիորեն և անվտանգորեն դաշտից փոխանցվեն դեպի GORBI-ի գրասենյակ: Համակարգը մշտապես ենթարկվում է մոնիթորինգի՝ առավելագույն կատարողական և անվտանգություն ապահովելու նպատակով:

Հարցաշարի մշակում

ԳՄՀԸ-ի հետ սերտ համագործակցության շրջանակում՝ ACT Assist-ը և GORBI-ն մշակել են հարցաշար, որը ներառում է երկրին ներհատուկ, ինչպես նաև տվյալ վայրին ներհատուկ փոփոխականներ և ԳՄՀԸ-ի նախատեսված միջամտությունների վրա հիմնված փոփոխականներ, այդ թվում՝ հավաստիացնելով, որ անհրաժեշտության դեպքում հարցման արդյունքները տալիս են 2016 KAP հետազոտության հետ համեմատության հնարավորություն:

Հարցման նախնական տարբերակը համաձայնեցնելուց և տեքստը կազմելուց հետո, կատարվել են պիլոտային հարցազրույցներ: Վերջիններս անցկացվել են օգոստոսի 10-12-ի միջև ընկած ժամանակահատվածում: Ընդհանուր առմամբ, կատարվել է 20 հարցազրույց: Ստորև աղյուսակում ներկայացված են հարցաշարի մասով հետադարձ կապը և համապատասխան վերջնարդյունքները (որոնք որոշվել են ԳՄՀԸ-ի հետ համագործակցությամբ):

ՀԱՐՑԻ ՀԱՄԱՐԸ	ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՈՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ
Ընդհանուր	Հարցումը չափազանց երկար է (միջին տևողությունը 40 րոպե է)	Ջնջված հարցեր. H&N1, E2, E3, E4, E5, E6, E7, Fw1, Fw2, Fw4, Fw5, Fw6, Fw9, H1a, H1b, H1c, H1d, H2a, H2b, H3, H4, H5, H6, H7, H8, Pro4, Pro5
Ընդհանուր	Կա ցուցաբարտերի անհրաժեշտություն հետևյալ հարցերի համար. H&N5, H&N6, H&N9, B1, CC3, E1, Fw10,	ՑՈՒՑԱՔԱՐՏ-երն ավելացվել են
Ընդհանուր	Քանի որ որոշ հարցեր հանվել են, ապա ավելացվել են մի քանի առավել ընհանրական բնույթի այլ հարցեր	Fw8.1, Fw11, SoI3
Ընդհանուր	«Այլ» օպցիան պետք է հանվի հետևյալ հարցերում. H&N5, H&N7, B5, CC1, E8, Fw10, P5, P6, P9, Pro2, Pro3	Հարցի «Այլ» օպցիան հանվել է
Fw1-10.	Վառելափայտ /firewood/ բառի սահմանման առնչությամբ՝ գրեթե բոլոր հարցվողները հետաքրքրվում էին, թե, օրինակ, իրենց սեփական այգիների ծառերից կտրատված ճյուղերը կարելի է համարել վառելափայտ:	«Վառելափայտ/firewood» բառի սահմանումը ներառված է «Վառելափայտ/firewood» բաժնի սկզբում:
P10	3-րդ ձևակերպման մեջ կա «ճեզներացիա» բառը: Պետք է ավելացնել դրա տեղական արտահայտությունը՝ այդ բառը հարցվողներին բացատրելու համար:	Ձևակերպումը վերաձևակերպվել է. «տարածքների ցանկապատում՝ բնությանը վերականգնվելու/թարմացվելու/վերակենդանացվելու հարցում օգնելու նպատակով»

Հարցազրույցավարների վերապատրաստում և ղեկավարում

Դաշտային աշխատանքի համար թեկնածուներին գնահատելիս՝ IMR-ը դիտարկել է ընտրության երեք նվազագույն չափանիշներ. նմանատիպ թեմաներով և կազմակերպության հետ CAPI մեթոդների և հարցումների նախկին փորձը, կրթության մակարդակը, հատկապես՝ համապատասխան բնագավառներում, և նրանց ներկայությունը դաշտային աշխատանքի ողջ ընթացքում:

Բոլոր հարցազրուցավարները և ղեկավարները մասնակցել են առերես բրիֆինգին, որը կայացել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Սեպտեմբերի 23-ի և 27-ի միջև ընկած ժամանակահատվածում Երևանում անցկացվել է 6 ուսումնական պարապմունք, իսկ հոկտեմբերի 1-ից 24-ը՝ 9 ուսումնական պարապմունք IMR /Միջազգային մարքեթինգային հետազոտությունների/ գրասենյակում: Ղեկավարների հետ երեք ուսումնական պարապմունք անցկացվել է հայաստանյան ղեկավար ներկայացուցչի կողմից, իսկ մնացածը՝ ղեկավարների կողմից: Վերապատրաստման դասընթացներն ընդգրկում էին հետևյալ թեմաները.

- Դեբրիֆինգ ուսումնասիրության նպատակների, որակի հսկողության մեխանիզմների և ծրագրի ընդհանուր իրականացման վերաբերյալ:
- Յուրաքանչյուր հարցի մանրամասն պարզաբանում, որպեսզի հաշվեգրում կատարող անձինք կարողանան հետևողականորեն մեկնաբանել բոլոր հարցերը և սահմանված կարգով տան բոլոր հարցերը տեղեկացված պարզաբանումներով՝ դժվարությունների դեպքում հարցվողներին օգնելու նպատակով:
- Ցուցում առ այն, թե ինչպես պատշաճորեն օգտագործել CAPI-ն հարցազրույցի գործընթացում (պայմանավորվածություն թվային փոփոխականների, իրավական արժեքների կարևորության վերաբերյալ, ինչպես տարբերակել և գրառել պատասխանները, գործիչակ՝ բաց հարցերի համար. կիրառելի չէ, հրաժարում պատասխանելուց, չգիտեմ և այլն)
- Մասնակցությունը երաշխավորելու մեթոդներ, հարցազրույց վարելու մեթոդներ, ինչպես լուծել դժվարին իրավիճակները և սովորական երևույթները, մանրամասն քննում և այլն
- Միմալյուցիոն հարցազրույցներ
- Ընթրնման թեստ
- Լոգիստիկա և ժամանակացույցեր:

Դաշտային աշխատանքի ընթացքում ղեկավարները մշտադիտարկում էին հարցազրուցավարների կողմից արձանագրված առաջընթացը՝ մշտապես կապ պահպանելով հայաստանյան ղեկավար ներկայացուցչի հետ: Ամեն առավոտ հայաստանյան ղեկավար ներկայացուցիչը և ծրագրի կառավարիչը տվյալների որակի հսկողություն իրականացնող թիմից ստանում էին հաշվետվություն ներկայացված հարցաշարերի ընթացիկ վիճակի վերաբերյալ (արտաբեռնված հարցազրույցների քանակը, և այդ հարցազրույցների որակի գնահատումը՝ հիմնվելով տարբեր պարամետրերի, ինչպես նաև պատասխանների հաճախականության մոնիթորինգի վրա): Այս ստուգումից հետո հայաստանյան ղեկավար

ներկայացուցիչը ղեկավարներին հրահանգում է այն գործողությունների կամ պարզաբանումների մասին, որոնք պահանջվում են ըստ իրավիճակի:

Հարցազրուցավարներին հրահանգվել էր կապ հաստատել ղեկավարի հետ՝ քննարկելու ցանկացած տարաձայնություն կամ ընկալելի հիմնախնդիր: Ղեկավարները նաև մշտադիտարկում էին հարցազրուցավարների կողմից արձանագրված առաջընթացը: Հայաստանյան ղեկավար ներայացուցիչը նաև մշտական կապի մեջ էր նրանց հետ հավելյալ հետադարձ կապի մասով, ինչպես նաև շարունակում էր կապի մեջ մնալ ծրագրի կառավարչի հետ: Բոլոր հարցաշարերը ստուգվում էին նույն օրը՝ GORBI-ի սերվերներում դրանց արտաբեռնումից անմիջապես հետո:

Դաշտային աշխատանք

Դաշտային աշխատանքը կատարվել է առերես հարցազրույցների ընթացքում Հայաստանում պատասխանողների տներում: Ինչպես նշվել է ավելի վաղ, հարցազրույցները կատարվել են CAPI-ի միջոցով: Հարցվել են 1400 հարցվողներ:

Բոլոր հարցազրույցներն անցկացվել են ընտրանքի պլանի խիստ պահպանմամբ: GORBI-ն IMR-ին տրամադրել է ընտրանքի պլանը և ընտրանքը, ինչպես նաև վերջնական գրված հարցաշարը: GORBI-ն կատարել է որակի հսկողություն և մշտադիտարկել պատասխանների հաճախականությունը:

IMR-ը պատասխանատու էր դաշտային աշխատանքի համար, ներառյալ՝ հարցազրուցավարների ընտրությունը և վերապատրաստումը, դաշտային աշխատանքի առաջադրանքների հանձնարարումը (աշխարհագրական դիրքեր, մեկնարկային կետեր, քվոտաներ և այլն) հարցազրուցավարներին, հարցազրուցավարների ղեկավարումը, շփման և պատասխանների բացակայության հաճախականության մշտադիտարկումը և գրանցումը:

Տվյալների որակի հսկողություն

GORBI-ի որակի հսկողության սեփական համակարգը և որակի խիստ հսկողության ընթացակարգերը թերևս հանդիսանում են GORBI-ի տվյալների հավաքագրման մեթոդաբանության ամենակենտրոնական առաձնահատկությունը: Տվյալների հավաքագրման սեփական ծրագիրը գրանցում է.

- Ժամանակի դրոշմ տիտղոսաթերթում և հարցաշարում արված յուրաքանչյուր մուտքագրման համար:
- Պլանշետի գտնվելու վայրի ԳՏՀ արձանագրում տիտղոսաթերթում և հարցաշարում արված յուրաքանչյուր մուտքագրման ժամանակ:
- Հարցազրուցավարի, տնային տնտեսության և հարցվածի միջև շփման ողջ տևողության ամբողջական ձայնագրություն:

Տվյալների հավաքագրման այս կարողությունները GORBI-ին տալիս են ոչ միայն հարցազրուցավարների գործողությունների ձայնագրման, այլև վիզուալացման եզակի ունակություն, և ապահովում տվյալների բարձր որակ: Այս ունակությունը գործում է պետական մակարդակից՝ մինչև առանձին հարցազրուցավարի մակարդակի տիրույթում:

GORBI-ի տվյալների կառավարման թիմը ամենօրյա կտրվորածքով վարում է գրերը տվյալների համախմբում՝ հետևյալ երևույթները դրոշակավորելու նպատակով.

- Շփման փորձ, որ տեղի է ունենում միևնույն տնային տնտեսության մասով մեկ այլ շփման փորձից ավելի քան 100 մ հեռավորության վրա,
- Շփման փորձ բնականոն աշխատանքային ժամերից դուրս,
- Հարցազրույցի ընթացքում գտնվելու վայրի ավելի քան 10 մ հեռավորությամբ փոփոխություն,
- Հարցազրույցի ամբողջ տևողությունը, որ ավելի քան երկու ստանդարտ շեղում զիջում է հարցազրույցի միջին տևողությանը,
- Հարցին պատասխանելու ժամանակը, որ ավելի քան երկու ստանդարտ շեղում զիջում է ցանկացած հարցի պատասխանի միջին ժամանակին:

Չնայած այս վիճակագրական տվյալները հաշվարկվում են ամենօրյա կտրվածքով, սակայն մշակվել է լրացուցիչ սցենար յուրաքանչյուր հարցաշարի համար, և այն պարբերաբար կիրառվում է դաշտային աշխատանքի ժամանակահատվածում: Այդ սցենարը դրոշակավորում է.

- Պատասխանների անտրամաբանական/արտասովոր համակցությունները,
- Հաշվեգրում կատարող որևէ անձի տրված հարցվողի պատասխանները, որոնք հիմնականում շատ թե քիչ չափով միատարր են, քան այն պատասխանները, որոնք տրվել են հաշվեգրում կատարող մյուս անձանց:

Ցանկացած ժամանակ որևէ հարցազրույց դրոշակավորվելիս՝ յուրաքանչյուր համապատասխան հարցազրուցավարի հարցազրույցների 100%-ը ստուգվում էր ձայնային ֆայլերը լսելու միջոցով: Ձայնային ֆայլը լսելուց հետո որոշում էր կայացվում, թե արդյո՞ք տեղի է ունեցել խարդախություն կամ արդյո՞ք եղել է բավարար հիմք դիտարկված անկանոնությունների համար, և, ըստ անհրաժեշտության ձեռնարկվում էին միջոցներ: Ավելին, յուրաքանչյուր հարցազրուցավարի աշխատանքի 30%-ը ստուգվում էր հարցազրույցների ձայնագրությունը լսելու միջոցով: Այն դեպքում, երբ հաշվեգրում կատարող անձը բռնվում էր խարդախության մեջ, նրա բոլոր հարցազրույցները ջնջվում էին տվյալների բազայից:

ՄԱՍ 4. Խնդիրներ

Հայաստանում մի շարք խնդիրներ են հանդիպել դաշտային աշխատանքների ընթացում: Չնայած IMR-ն ունի փորձառու հարցազրուցավարների թիմ և տրամադրում է խորացված ուսուցում այս հատուկ հարցման մասով՝ նախքան դաշտային աշխատանքը սկսելը, և կատարվել էին որակի հսկողության ընթացակարգերը և դաշտային աշխատանքի ընթացքի մանրակրկիտ մոնիթորինգ, սակայն դաշտային աշխատանքի ընթացում ի հայտ էին գալիս որոշ խնդիրներ, որոնք հետաձգում էին դաշտային աշխատանքի ավարտումը: Խնդիրներից մեկը կայանում էր նրանում, որ որոշ վայրեր բավականին հեռավոր և գյուղական էին, ինչն այնտեղ դժվարացնում էր քվոտայի ընտրանքների հասնելը և ավելի շատ ժամանակ էր պահանջվում այդ ՄՀՄ-ներում դաշտային աշխատանքն ավարտին հասցնելու համար: Բացի այդ, դաշտային աշխատանքի ընթացքում 171 հարցազրույց մերժվել էր որակի հսկողության

ընթացակարգերի պատճառով, և պետք էր կրկին կատարել նոր հարցազրույցներ: Քանի որ շատ հարցազրույցներ մերժվել էին, ապա այդ հարցազրույցների և նույն հարցազրուցավարի կողմից կատարված մյուս հարցազրույցների բոլոր ձայնագրությունները պետք է կրկին լավեին: Դժբախտաբար, դրա համար սպասվածից ավելի շատ ժամանակ պահանջվեց, և այն ավարտին հասցվեց միայն դաշտային աշխատանքն ավարտելուց հետո: Եվս 54 հարցաշարեր մերժվեցին այդ հսկողությունից հետո, և նոր հարցազրույցները կատարվեցին սկզբնական դաշտային աշխատանքն ավարտելուց հետո: Դրանով պայմանավորված՝ մի քանի հարցազրուցավարներ հեռացվեցին և փոխարինվեցին տվյալների վատ որակի տրամադրման կամ ընթացակարգերին չհետևելու համար:



ENVIRONMENT, CLIMATE, OPPORTUNITIES
for people and nature

Բնական պաշարների կառավարում և Էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ECOServe)

Հանրապետության 59, 9-րդ հարկ
0010 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 51 00 65
Էլ հասցե՝ ECOServe@giz.de
Կայք՝ www.giz.de; www.biodivers-southcaucasus.org

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ)